



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



1999
ՇՈՒՇԱՆԻԿ

ԴՈՒՍՏՐ ՄԵԾԻՆ ՎԱՐԴԱՆԱՅ

ՀԱՅՈՅ ՍՊԱՐԱՊԵՏԻ

ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆ

Ազգային պատմութիւնից

Բաժանած երեք հանդիսի վրայ

ԳՈՐԾ

ՅԱԿՈՎՔԱՅ ԿԱՐԵՆԵԱՆՑ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Տ. Տ. ՄԱՏԹԵՈՍԻ ԱՍՏԻԱՆԵՆՏԻ
ԿԱԹՈՆԴԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

1860



Ի ԹԻՖԼԻԶ

Ի ՀԱՅ ՏՊԱՐՄԻՒ

ԳԱՅԵՐԵԼԻ ՄԵԼՔՈՆԵԱՆՑ ԵԻ ՀԱՄԲՈՐՉՈՒՄՈՅ
ԷՆՔԻԱՃԵԱՆՑ:

Ե ՅԻՇԱՏԱԿ ՀՈԳԻՈՅ

ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ՄԱՐԻԱՄՈՒ ՅՈՎՀՈՆՆԻՍԵԱՆ

Անունը



Ի ՄՈՍԿՈՎ ԲՆԱԿԵԱԼ

ԹԻՅԼԻՉԵՑԻ ԿՈՄՄԵՐՑԻ ՍՈՎԵՏՆԻԿ ԵՒ ԱՍՊԵՏ

ՅՈՎ.ՀԱՆՆՈՒ ՍՏԵՓԱՆՆՈՍԵԱՆ

ՑՈՎՆԱՆԵԱՆՑ

ПЕЧАТАТЬ ПОЗВОЛЯЕТСЯ

Сътьмъ, чтобы по отпечатаніи представлено было въ Ценсурный Комитетъ узаконенное число экземпляровъ. Тифлісь. 6 Сентября 1860 года.

Цензоръ И. Кайтмазовъ.

ՅԱՌԱՋԱԿԱՆ

Բազմավաստակ Միսիթարեան վարդապետները 1853 թուականին
ՍՈՓԵՐՔ ՀԱՅԿԱԿԱՆ անուաննեալ դրոց վեցերորդ հասորի մէջ տը-
պագրելով Մեծին վարդանայ զստեր Շուշանիկի վկայաբանութիւնը,
և իրանց համառօտ աղջարարութեան մէջ զանազան աղջու խօսքե-
րով յայտնելով Շուշանիկի սփրալի դործն , ասում են « Կին սրտիւ
Մամիկոննեան և հաւատով Պարթեան այսքան եղերական համովակց
ժումկալեալ և ի նորմն անհաճանչելի կամօք կատարեալ, վազու ար-
դիօք վառեալ էր զարտ և զհողի բանասիրաց օտարաց, եթէ եկեալ էր
նացա ի ծանօթութիւն ընդ Պոլիսքունայ և ընդ նմանին ի թատերս իսկ
սրբազնից ողբերգութեանց յիշատակել . իսկ մեք և ի կատարեալով
տութենէ և ընթերցուածոյ վարուց սորա վրիպիալ մնայաք ցարող»
Այդ արդարացի յանդիմանութիւնը, որչափ բոլոր մեր ազդին կրծ-
բարերի, այնչափ ևս առաւել մեզ Վրաստանի և մանաւանդ Թիֆլի-
զոյ բնակչացու, որ ամենայն օր տեսնուամնեք Մետեխի բերդի մէջ
բազմազարեան եկեղեցի Վրաց և նորա սեղանի ձախ կողմումը պա-
ռանձնի մաստուի մէջ յաւանենական յիշատակաց արժանի Շուշա-
նիկի գերեզմանը : Զարմանալի է, որ Առոք Շուշանիկի վսեմապանծ
գործոց պասմութիւնը և նորա յիշատակը այնպէս էր մոռացութեան
տակ լնկել, որ մեր քաղաքի բնակչաց մէջ համարեա ոչոք չէր ի-
մանում, թէ իրանց արինակից նահատակի մարմինն է թաղած իրանց
աչքի առաջը : Ես վարուց սովորութիւն իի տրած բարեկենդանի
հինգշաբթի Վարդանանց նահատակութեան տօնի օրը երթալ յուխտ
երանելի Շուշանիկի գերեզմանին : բայց անցեալ 1859 թուն տկա
րութեանս պատճառաւ շկարելով անձամբ կատարել իմ ուխտադրու-

թիւնս. անկողնիս մէջ նստած յօրինեցի մի ոսանաւոր ծեր ծԱՌՈՒԿԻ
կի ԲԵՐՆԻՅ, որ և տպագրեցաւ «ՄԵԴՈՒ ՀԱՅՈՒ.ՍՍ.ՆԻ» անուաննեալ
անդուս Լրագրի մէջ ի 14 Մարտի 1859 ամի, համար 13:

Այս ոսանաւորը մնձ աղջեցութիւն դործեց միր բարեմիտ հա-
սարակութեան մէջ, արք և կանայք խմանալով թէ իրանց մնձ նա-
հաստակի երանելի դուստրը թաղած է իրանց աչքի առաջը, սկան,
խումբ խումբ նորա զերեղմանին ուխտ զնալ: Ամենայն Հայ ցանկա-
նում էր մանրամասնաբար խմանալ իրանց հայրենակից որբունոյն
պատմութիւնը, թէ ինչպէս Վարդսմի դուստր Շուշանիկը Հայաստա-
նի օրհնեալ հողից հեռացած օտար երկրի մէջ անցուցել է իր կեան-
քը. և արժանացել է վկայուեի անուան, որի տօնը կատարում է մեր
երախտագիտ Սուրբ Եկեղեցին:

Միմիթարեան հարց ցանկութիւնը, մեր կրօնասէր ժողով բղեան
փափաղը և իմ եռանդագին ուխտն կատարելով, և աղջային զրքերից
քաղելով Շուշանիկի պատմութիւնը, յօրինեցի նորա ողբերգութիւ-
նը, որչափ իմ կարսղութիւնս ներեց, և որպէս զի այն անշունչ շա-
րադրածը մեր բազմահասոր պատմութեանց պէս զրադարաների
մէջ չփիմի. առաջարկեցի մեր հոգենոր դպրոցի ուսանողներին նոյնը
իտես հանել թատրոնական բնմի վրայ: Նոքա յօժարակոմ յանձն
առան մասնակից լինել այդ բարենալասակ դործին, և իւրաքանչիւրը
վեր առաւ իրա պատկանեալ զործողութիւնը. (ո.օլ), Մեր դպրոցի ու-
սուցիչներից, յաջողանեուն Պ. Սոլոմոն Աբամելիքեանը յանձն առաւ
պատրաստել պատմաբանական ձևով դերասանների հանդերձները և
թատրոնական բնմի պատրաստութիւնքը, խակ Պ. Գէորգ Աբովիսան-
ցը երգերի եղանակը սովորեցնել միտաւ: Մին քանի օրից յետոյ ա-
մենայն ինչ պատրաստ էր, Սեպտեմբեր ամսոյ մէկին հրատարակուե-
ցաւ, թէ պէտք է ներկայացնուի միա օրը ՇՈՒՇԱՆԻԿԻ ՈՂ.ԲԵՐԳՈՒ-
ԹԻՒՆԻ. Հայոց հին ուսումնաբանի լնդարձակ դահլճումը: Նոյն օրը
քաղաքիս առաջին իշխանից մինչև վերջին արհեստուորը որքան
ձեռները հասաւ տոմսակներ տարան, բայց ափսոս, որ երեք հա-
րիւր հոգեոյ համար միայն բաւական էր տեղը. շատ և շատ մարզիկ
կարողացան տոմսակ ձեռք բերել: Ինչ աղջեցութիւն որ տրաւ հան-

դիսատեսաց վերայ այս ողբերգութիւնը՝ ևս չեմ կարող պատմելու,
աղջային օրագիրքը նոյնը հրատարակեցին, միայն այս չափս կատամ
որ ժողովուրդը միաձայն ինդղեցին թատրոնը ընդարձակել, և շու-
տով միւսանգամ ներկայացնել նոյն ողբերգութիւնը:

Թատրոնի ընդարձակելը, և նորանոր պատրաստութիւնը քա-
շեց երկու շաբաթ, բարեմիտ հաստրակութիւնը ամենայն օր տեղե-
կութիւն էր պահանջում հանդիմի աւուրը. տրդէն շատ մարդ նշա-
նակել էր տուել իրա անունը այցելուաց ցուցակումը վերջապէս հա-
սաւ այն օրը՝ յորում Եկեղեցին տօնում է մեր Շուշանիկի տօնը, Սևա-
տեմբերի 20 ին, Միհր ուսանողքը իրեն նախատօնակ իրանց ողբերգու-
թեան պահանջախն որոշեցին ամսու 19 ին ներկայացնել երկրորդ ան-
գամ Շուշանիկի ողբերգութիւնը, վաղուց արդէն հինգ հարլսրից աւե-
լի տոմսակներ բաժանուած էին. և եթէ հազար տոմսակ ևս լիներ
անշունչ կըբաժանուէր, և ահա դիմի ճաշուն ժամը եօթին ժողովե-
ցան այցելուք տանուայն աղջից և ամենայն կոչմանից արք և կա-
նայք: Ժամը եօթն և կէսին միսաւ հանդէոր. և ասան և կէսին վեր-
ջացաւ: Բարեմիտ հաստրակութեան աչքերից թափած արտասու-
քը ապայցոյ էր իրանց աղջապէր և զգայուն սրտերին, նոյս ծափա-
ձայն գովութիւնքը, և գոհութիւնքը նշան էին նոցա հայրենասիրու-
թեանը՝ և աղջափիրական իրախուսանոյ առ իւրեանց մատադ ման-
կունքը: Բայց կըլինի արդեօք մի տեղ վարդ առանց փշի, մեր ու-
սանողքը պատրաստուում էին դեկտամիրի վերջերումը ներկայա-
ցնէ Վարդանանց հաւատոյ հանդէոր առաջին անգամ, և Շուշանիկը
երրորդ անդամ, բայց մւաշ, մի քանի չարանախանձ անձանց դա-
ւաճանութեամբ խափանեցաւ թատրոնը. և շիջաւ մատադահաս ման-
կանց և ամսունդը: Միայն մեր յոյսը մ.ծ է առ քննողն խորհրդոց մերոց,
և առ արդար դաստուրն մեր, կուզայ ժամանակ, որ ճշմարտութեան
ձայնը կհասնի արդարամիտ զատաւորաց ականչը, յայնժամ դաւաճան
Վասակները կընդունին իրանց արժանահաս պատիմքը, և մեր թատրո-
նը կրկին է բացուի:

Այս հսմառօտ տեղեկութիւնը աալից յետոյ պարտաւորութիւն եմ
համարում, նախ իմ հրատարակական շորհակալութիւնը մատուցանե

բոլոր բարեմիտ չայ աղդի հասարակութեանը, իմ չայ հայրենասէր
աշակերտներիս ևնոցա հետ միացեալ արքունի ուսումնարանի մին
քանի ուսանողներին, նմանապէս Պ. Արամելիքեանցին, Պ. Արոյ-
եանցին և ամենեցուն, որոնք չխնայեցին իրանց զործակցութիւնը
վերոյգրեալ հանդէսը, որքան կարելի է փառաւոր և յարմար ձևա-
ցնելու:

Եւ երկրորդ յայտնումնմ հրապարակաւ, թէ ևս առ այժմ այս ող-
բերգութիւնը սպազրել տալու միտք չունեի, ևս կամնումէի մինքա-
նի անգամ ներկայացնելով լսել հասարակութեան կարծիքը և ուսում-
նական հղբարց զնութիւնը, և եթէ զանում էին իմ շարադրութեան
մէջ անյարմարութիւնք և ոխալանք, ուղղել և ապա սպազրել տալ .
բայց որովհետեւ մեր մասնիճներից ոմանք բամբառել էին մեզ իրու
ներկայացուցիչ, աշակերտաց վարուց և բարուց սպականիչ անպար-
կեշտ խաղարկութեան, իսկ չարավեղու զրողինունը յանդցնել էր դրել,
որ Եւրոպական ուժունք և հայեցուածք չունեցողը չյանդգնի այսպիսի
շարադրութեանց ձևոնամոխ լինել, վասնորոյ չսպասելով այլ ևս կա-
տարեազրութելու նոյն եղերերգութիւնը, ահա իսկութեամբ հրատարա-
կումն նոյնը. թող աշխարհ ամենայն ձանաչէ մեր մտաց համոզումը
և մեր վարդապետութիւնը և դատ առնէ ընդ մեզ և ընդ մասնիչս մեր
և երբ լուս ընկնի խաւարասէր մասնիճների գրելը, ըստ որում «իք
ինչ ծածուկ, որ ոչ յայտնեցի» կամ աղզակն լրազրաց միջոցաւ կամ
առանձին, կհրատարակեմ զայնս, որ ոչ միայն մեզ ևնոցա ձանա-
չողները, այլ և մեր ապագայ սերունդը և մեր աղդի պատմութիւնը
լաւ ձանաչն մեր ևնոցա նպատակը :

Յ. ԿՈԲԵՆԵԱՆՑ.

ՇՈՒՇԱՆԻԿ

ՀԱՆԴԻՍԱՑՈՅՑ

ՎԱՐԴԱՆ մՆԺ սպարապետ Հայոց。
ՀԱՄԱԶԱՅՊ հայր նորա,
ԳԱՏԻԿ կին նորա,
ՇՈՒՇԱՆԻԿ էրեց գուստը նորա,
ՀՄԱՅԻԱՆ } եղբայրք Վարդանայ,
ՀԱՄԱՅՊԵԱՆ } որդիք Շուշանայ,
ՄԻՀԲՈՆ վԱՅՐԱՆԿ } որդիք Շուշանայ,
ՍՈՅԻԱՅ } դասերք Շուշանայ,
ՔԵԹԵՎՈՆ } դասերք Շուշանայ,
ԱՆԴՐԵՅՈՍ վարդապետ,
ԵԵՐ ԾՈՌՈՒԿ հին աւտրց ծառայ նորա,
ՎԱՐԴԻՆ արքայ Վարայ,
ԶՈՉԻԿ եղբայր նորա,
ՄԱԼԻՊԵՏ իշխանք Վարայ,
ԲԱԳԻՍՈՒՆԻ } իշխանք Վարայ,
ԲԱՆԴԱՊԵՏ,
ՍԵՆԵԿԱՊԵՏ,
ԴԱՀՃԱՊԵՏ, դահճք և զինուորք.

ԳՈՐԾ ԱՌԱՋԻՆ

ՏԵՍԱՐԱՆ Ա.

♦ ♦ ♦

(Գործողութիւնը կատարվումէ Շահապիւանի քաղաքում Վարդանի պատումը : Վարդանը նստած է Հայոս տանի ձեռլ զարդարած սենեակումը, վարժադոյը բացուելից յետոյ կանչումէ իւր եղբայր Հմայեակին և ասում է):

ՎԱՐԴԱՆ

Հմայեակ, ես համբաւ առայ, որ Վարայ Վազգեն արքայի եղբայր Զոջիկ իշխանը գալիս է մեղ մօտ զեսպանութեամբ. և զարմանեն այն է, որ ոչ մարզպանի մօտն է գալի և ոչ հազարապետին, այլ ուղղակի ինձ մօտ Գեսպանութեան պատճառը ինձ յայտնի չէ, բայց ինչեւ իցէ, մենք պէտք է ընդունենք նրան այնպէս՝ ինչպէս ընդունում էին Արշակունի թագաւորները օտար տէրութիւններից եկած զեսպանները : Ուրեմն գնան առ քեզ հետ Արշաւիր կամսարականը, թաթուլ Դիմաքսեանը և միւս նախարարներից մի քանիսը, և իմթիկնապահ զօրքերից մի դունդ . և զնա Զոջիկ իշխանին ընդ առաջ. և ուր որ հանդիպես նորան, տուր պատշաճաւոր ողջոյնը, հարցրու Վազգեն արքայի և նոյա աշխարհի որպիսութիւնը. և հրաւիրէ որ մեզ մօտ վէր գայ. բայց նախ քան զնալդ՝ ասաւ մեր եղբայր Համազասպեանին, որ մեր պալատումն առանձին տեղ նշանակեն իշխանի և նորա մարդկանց համար, և որքան կարելի է արժանաւոր սեղան պատրաստեն, որպէս զի օտար ազգերը ըլլ կարծեն, թէ Արշակունեաց հզօր տէրութիւնը բարձուեւ-

լեց յետոյ վերացան Հայոց աշխարհից քաղաքական կարգ
ու կանոնները և Հայքը իրանց իշխանական դաւազանի հետ
հեռացրին իւրեանցից իւրեանց բնական հիւրասիրութեան
սուրբ օրէնքները ասա նմանապէս որ իշխանին հետ եկած
մարդկանց համար առատ ոռոճիկ սահմանեն և բոլորի հաւ
մար արժանաւոր պարզ եներ .

ՀՄԱ.ՑԵՍԿ

Յատ բարի սիրելի եղբայր ես կ'կատարեմ ձեր բոլոր
հրամանները Դուք անհոգ կացէք ինչ ժամանակ ես Արտա-
շեր և Վռմշապուհ թագաւորաց մօտ պաշտօնի մէջ էի .
քանից անգամ թունաց կայսեր Պարսից Հոնաց և այլ տէ-
րութեանց դեսպանները ընդունել և գոհութեամբ՝ շատ
գոհութեամբ ուղևորել եմ . ես ինքս էլ քանի անգամ օ-
տար տէրութեանց մէջ դեսպան եմ գնացել պալատական
կարգերը նոր սովորելու չեմ Համազապի որդին իւր սպա-
րապետ եղբայրը ամօթապարտ չի թողութօտարաց առաջեւ :

Ա.Ա.ՊԱՆ

Ուրեմն զնաք բարեաւ :

ՀՄԱ.ՑԵՍԿ

Մնաք բարեաւ սիրելի եղբայր :

Վ.Ա.ՐԴԱՆԻ, միայն

Զդիաեմ ինչմի ծանր նախազգացութիւն թանձր մա-
ռախուղի պէս պատել է սիրտս ինչ սլիտի լինի արդեօք
ջոջեկ իշխանի գալատեան պատճառը այժմ գոհութիւն
Աստուծոյ հանդարատութիւն է թէպէտե անհիմն թէ-
պէտե կարճատե բայց նոքա օդնութեան կարօտութիւն

չունին և մենք ես ուրիշներին օդնելսւ ժամանակ չու-
նինք աւրեմն ինչ է արդեօք այս մարդու գալստեան պատ-
ճառըն Անմիաբանութիւն անմիաբանութիւն զու մեզ այս
օրը ձգեցիր որ Վրաց արքայի դեսպանի դալուցը ես կաս-
կածում ենք Մենք որ մի ժամանակ Մակեդոնացւոց Ասու-
րոց Պարսից Մարաց և Հռովմայեցւոց ահեղ և սարսափելի
տէրութիւններից եկած դեսպաններից չենք կասկածում .
մեր սահմանակից ազգերի նեղացած ժամանակը արծուի
նման օդնութեան կ'հասնէնք մեր պատուական նախարար-
ները իրանց մարմնոյն վրայ եղած վերքերի սպիների թուով
կ'պարծէնային մեր զօրականքը՝ պատերազմի ձայնը հար-
սանիքի նուազարաններից աւելի կ'սիրենն մեր նժոյգ ձիեւ-
րը հեռուից պատերազմի հոտ առնելով ուներով գետինը
կ'փորենն մեր սիրուն կանայքը՝ իրանց ամուսնոց քաջու-
թեամբը կ'խրոխտանային և Հայաստանի աղջկունքը իրանց
համար կուրծքի կողմէց վիրաւորուած երիտասարդները
կ'ընտրէնն վիսայ իսկ քամակից վիրաւորուածների անու-
նը անգամ չենք տալ բայց հիմայ սուաղ ծառերի խշալն անգամ ահարկու է մեր սրտերին ,

(Այս միջոցին ներս է մանում ծերունի Համազասպը և տեմնելով իր որդու
վրովմոնքը և աչքերի վրայ արտաստաց կաթինները սրտաճմիկ ձայնին
ասում է)

ՀՄԱ.Չ.Ա.ՅՊ

Վարդան Սիրելի Վարդան այս ինչ պատրաստութիւն
է պալատի մէջ ինչ հոգսերի մէջ էք ընկղմած ասա ինձ
որդեակ և թէ պատերազմի վտանգ կայ մի՛ ծածկիր քո հօ-
րից այդ Հայաստանի Տակատպիրն է ասա ինձ թէ և ծե-
րութիւնից յաղթուելով գուցէ բաղկի զօրութիւնով չը-

արողանամ օդնել ձեզ բայց յիսուն և վեց տարի իմշայ ը բնի ազգին վայելու արքունի գործոց մէջ կրթուելով կարող եմ խորհրդով օդնել ձեզ :

Վ.Ա.Թ.Ա.Ն.

Չէ, Հայր, պատերազմի վտանգ չ'այ, բայց այսօր Գուշարաց իշխանից սուրհանդակ եկաւ և լուր բերեց, որ Վըրաց արքայի եղբայր Զոջիկ իշխանը մեղ մօտէ դալիս զեսպանութեամբ, ևս իմեղբարցու հարկաւոր պատուէրները տուի, և այժմ սպասում եմ իշխանի գալատեանը :

Հ.Ա.Մ.Ա.Ջ.Ա.Պ. մտածերով

Վազգէնի եղբայր . . . Զոջիկ իշխանը . . . դեսպանութեամբ դալիս է Հայոց սպարապետի մօտ . . . (դանալով դեպի իմարդանը) Վարդան, այդ համբաւը պատերազմի համբաւից վտանգաւոր է, ևս ճանաչում եմ Վազգէնին, ճանաչում եմ և Վըրաց ազգը, եթէ տէրութեան գործով լինի նորադարձ մարդանի մօտ զնայ, իսկ ուղղակի քո մօտ դալը ուրիշ խորհուրդ ունի, Աստուած բարին յաջողէ . բայց լաւ իմացիր, Վարդան, որ մեծ զգուշութիւն պէտք է, առանց հասուն խորհրդոյ բան ըստնես, Զոջիկ իշխանը բարի մարդէ, բայց այնու ամենայնիւ կրկնն կասեմ քեզ զգուշութիւն պէտք է :

Վ.Ա.Թ.Ա.Ն.

Հայր, միթէ Հայաստանի թագաւորութիւնը վերցուելով նոցա նահասկետական սովորութիւնը ևս վերացաւ, միթէ Հայաստանի որդւոց վարք ու բարքը աշնակէս ապականուեցաւ, որ իրանց բարիի զօրութեանը, իրանց մտքի սորութեանը և իրանց օտար ազգերից առած հանձարցն

ասկաստան լինելով արհամարեն ծերերի խորհուրդը և իրանց գլխուն բան բռնեն, չէ, Հայր, քո որդի Վարդանը պահէլէ, և մինչեւ ՚ի մահ պիտի պահէ Հայաստանի սրբագան սովորութիւնները, քո որդի Վարդանը առանց քո խորհրդին, առանց քո կամացը ոչինչ չէ արել մինչեւհիմայ, և ոչինչ անելու չէ:

Հ.Ա.Մ.Ա.Ջ.Ա.Պ.

Շատ ապրիս, որդին, Աստուած տայ, որ այդպէս լինին բոլոր Հայաստանի որդինքը, ուրիմն մնաս բարեաւ, ևս երթամ հանդստանամ, վաղը բարի լոյսը բացուի, կ'խօսենք և կ'խորհրդինք ինչ որ անելու ենք :

Վ.Ա.Թ.Ա.Ն. համբարիով հօր ձեռքը

Գնոսք բարեաւ Հայր իմ, գիշեր բարի :

ՏԵՍԱՐԱՆ Բ.

(Վարդանը նոտած է իր անենակումը խորը մոտածմանց մէջ բնկրմած, դրսից գոլիս ևն ելզոց հնուազարանց ձայներու—Կերս է մոնում Հայեակը)

ՀՄ.Ա.Յ.Ա.Կ.

Ալրելի եղբայր, ահա եկաւ մեր հիւր Զոջիկ իշխանը, կ'հրամայէք, որ ներկայանայ ձեզ,

Վ.Ա.Թ.Ա.Ն.

Ուղղ դայ :

(Հմայեակը զուբս է զնում)

Վ.Ա.Թ.Ա.Ն. միայն

Իմ Հայր համազասպը ինձ խրատումէ, զգուշութեամբ արվել Վայց իշխաններու հետ խօսակցութեան մէջ, չդիւ եմինչզգուշութիւն բանցնեմ, լաւ էր, թէ մի քիչ Պար-

սից խորամանկութիւնը կարողանայի գործածել բայց Հայոն
ովլ խորամանկութիւնն ովլ և եթէ Հայը կամենայ ակամայ
խորամանկութիւն գործ դնել իսկոյն կ'յայտնուի, որովհետեւ
տե բնականից նաև սովորականից դուրս արած նմանաձեւ
ութիւնը՝ իսկոյն ցոյց կ'տայ իւր անյարմարութիւնը։ ԶԵ.
ԽՄ Խօսքս պիտի լինի պարզ և աննենգ։

(Հմայեակի առաջնորդութիւնը ներս են գալի Զոջիկ իշխանը և հետո
Մարդուն և Բաղրատունի իշխանը)։

ԶՈՉԻԿ

Ողջոյն Ձեզ, մեծ և փառաւոր իշխան Հայոց։

ՎԱՐԴԱՆ համբուրելով Զոջիկին

Ողջամբ տեսի զքեզ արքայազն իշխան Վրաստանի,
Բնչպէս են, առողջ են մեր եղբայր Վազգէնը և մեր սիւ
րելի իշխանքն Վրաստանի,

ԶՈՉԻԿ

Շատ լաւ են և շատ սիրոյ և յարդանաց ողջոյն կը-
նուիրեն Ձեզ, և ահա իմեղբայր Վազգէնը մեր ազգի հո-
գեոր և մարմնաւոր առաջնորդաց խորհրդով՝ այս նամա-
կը յատուկ իմձեռաւմբ յանձնումէ ձեզ, որովհետեւ ըն-
տանեկան գործքի համար է (տարիս է նամակը) և կ'յուսամք,
որ անտես չէք առնել այդ նամակի մէջ զրած խնդիրը
կատարելու։

ՎԱՐԴԱՆ

Շատ բարի արքայազն իշխան, Դուք երկար Ճանապար-
հից գալով վաստակած կ'լինիք, հրամայեցէք ձեզ համար
պատրաստած օթեամումն հանդստանալ մենք կ'կարդանք
նամակը և վաղը կ'տնօրինենք ինչ որ արժանն է։ (դատապալ)

դէպի Հմայեակը) Հմայեամկ, տար իշխաններին իրանց համար
պատրաստեալ տունը, հրամայէ ոտնելը լուանալու ջուր
տալ և կատարեցէք ինչ որ կ'վայելէ մեծապատիւ հիւրե-
րի ասպնջականութեան օրէնքին։

ՀՄԱՅԵԱԿ

Շատ լաւ, սիրելի եղբայր, յոյս ունիմ, որ կարողա-
նամ Հայոց ազգի հիւրասիրութեան բոլոր պայմանները կա-
տարել։

ԶՈՉԻԿ

Մնաք բարեաւ, մեծ իշխան։

ՎԱՐԴԱՆ

Գնաք բարեաւ արքայազն իշխան։

ՎԱՐԴԱՆԸ միայն

Զդիտեմ, ինչ կայ այս նամակի մէջ, որ սրտիս վրայի
միզապատ մառախուղը հետ զիեաէ թանձրանումէ. եթէ
այս նամակը տէրութեան գործքի համար լինի, ես առանց
կնիքը քանդելու կ'առաքէի մարզպանի մօտ, եթէ ազգա-
յին գործոց համար լինի, արդէն կ'հրաւիրէի ազդի հողե-
ւոր և մարմնաւոր իշխանները և նոցա մօտ կ'բանայի, բայց
նամակ բերողն ասաց ինձ, որ ընտանեկան գործի համար
է, ուրիմ կանչեմ իմ հայրը և իմեղբարքը և նոցա մօտ
բանամ նամակը. և ահա գալիս են հայրս և եղբարքս (այս
միջոցին ներս են մտնում Համարասոլ, Հմայեակը և Համազապեան, Վար-
դանը առաջ է գնում համրուսմ է իւր հօր ձեռքը և նատացնումէ տախտի
վրայ, Համազապը հրամայում է իւր որդի Վարդանին նատել իւր մօտ, իւր
միս որդիքը ձնաքերը կործ քերին զրած կանդումն իրանց հօր և մեծ եղ-
բօր համգեալ)։

Հայր, Բնութես էիք այս գիշեր, Աստուծով լսու հանագիստ քննած էիք :

Որդի, Համազասպի համար միթէ հանգստութիւն պէտք է լինի աշխարհքի վըայ, Համազասպի հանգստութիւնը մահն է, բայց աւալ, նա ևս թշնամացել է հետո քառասուն երկու անդամ պատերազմների ամենից վտանգաւոր տեղերը գտնուեցայ, քանիցս անդամ վերքեր ստացայ, բայց պատերազմից անվնաս ազատուելով՝ գոհանում էի ի մագահպանովից, որ նորանոր պատերազմների մէջ ցոյց տամ իմբազկիս զօրութիւնը Հայաստանի թշնամեաց գէմ բայց այժմ՝ մահը կեանքի տեղ եմինդրում և չեմ հասնում, Հայաստանը, մեր հիւրասէր Հայաստանը ալէ կոծեալ նաւի նման է տատանում, և ես պիտի հանգստանամի իմ անկողնիս մէջ, Հայաստանի թագաւորը Արշակունեաց վերաջնու սերունդը Անուշաւանի բերդումը բռնած՝ Համազասպը պիտի հանգստանայ, ո՞հ, սիրելի որդի, մի՛ նորողել վերքերս, ասաւ ինչոր այժմ հարկաւորն է, անցածին հասնել անկարելի է :

Հայր, Երէկ ջոջիկ իշխանը եկաւ, և այս նամակը Վաղգէն արքայի կողմից յանձնեց ինձ, իւր խօսակցութեան մէջ յայտնելով, որ ընտանեկան գործի մասին է նամակը, ուրեմն հրամացեցէ քրանալ ինքը և կարլալ ձեր և իմեկըօրշա առաջ:

Բաց և կարդա, սիրելի որդեակի :

ՎԱՐԴԱՆ բաց է անում նամակը և կարդումէ :

«Ա ազգէն արքայ Վրաստանի և բոլոր նորա սահմաններին հանդերձ միաբանութեամբ հոգեոր և մարմնաւոր իշխանաց ազգիս մեծ և պատուական սպարապետիդ Հայոց Վարդանայ և ամենայն ուխտին Հայոց ողջոյն շատո»:

«Պոտք լսու դիտէք, որ աշխարհի և խրաքանչեւր տան երջանկութիւնը կախուած է լսու կողջից, վասնորոյ և մեծիմաստ Սողոմոնը ասում էր «կին ժրագլուխ պսակ է առն իւրում» Վրաստանը երբէք մոռանալու չէ, որ Քրիստոնէական սուրբ հաւատը մի Հայաստանից փախած կողջ ձեռամք ընդունեց, Վրաստանը երբէք մոռանալու չէ, որ Քրիստոսի անուան համար կանանց միջից առաջին մարտիրոսը եղաւ Սանատրուկ արքայի երանելի Սանդուխտ գուսարը, Վրաստանը լսու դիտէ, որ Հայաստանի բարեբեր երկրի մէջ սերմանած Հռիփսիմեանց արիւնը շատ Հռիփսիմեներ կը պտղաբերէ, Հայաստանի կանանց բարի համբաւը՝ արդէն աշխարհի մի ծայրից միւս ծայրն է հասել, վասնորոյ և ես ցանկանալով մտանել ամուսնութեան սուրբ լծի տակ խորհրդով հոգեոր և մարմնաւոր իշխանաց ազգիս ընտրեցի՝ որոշել ինձ համար հարսն և Վրաստանի համար մայր՝ Հայաստանի դուստրը՝ ուրեմն խնդրեմ ձեղանից քաջազօր իշխան, ընդունէք միողջ ազդի խնդրեքը և իմեկըայր Զոջիկ իշխանի, Մարդպետ և բազրատունի իշխանաց և նոյցա հետ եկեալ մաղարաւորաց հետ միասին առաքէք ձեր ամենօրհնեալ է՝ բէց դուստր Շուշանիկը, որի հետ պսակուելով լսու Քր

բիստոնէական սուրբ օրինոց, երջանիկ լինիմ աշխարհի մէջ.
և ինչպէս Հայաստանը Վրաստանի քրիստոնէութեան մայր
և դայեակ եղաւ, նոյնպէս և ձեր դուստրը լինի Վրաս-
տանի կանոնց բարելաւութեան մայր և դայեակ : Ողջ լե-
րուք, նիդակակից և մինչեւ ՚ի մահ բարեկամ ձեր Վազգէն:

Ի 16^Յ Մայիսի 437 ամի Տեառն.

Յաբքայական Պալատան մերում .

Ի Մցիսէթ :

(Այս նամակը կարդալից յետոյ երկար լուսթիւն տիրումէ, և յետոյ ըս-
կառումէ խօսել Համալասապը),

ՀԱ.ՄՅ.ԶԱ.ՍՊ

Վարդան, նամակը կարդացիք, Զոջիկ իշխանի դեսպա-
նութեան պատճառը լսեցիք, այժմ ի՞նչէ ձեր միտքը :

Վ.Ա.ՐԴԱՆ

Հայր, մեր միտքը այն կ'լինի, ինչ որ դուք Կ'հրամայէք:
ՀԱ.ՄՅ.ԶԱ.ՍՊ

Վարդան, ներքին և արտաքին թշնամիներից տկարա-
ցած մեր աղջու արդէն կիսամեռ հիւանդիէ նմանում, այ-
ժմ քեզէ մնում, կամ քո սիրելի Շուշանիկը կորուսանեւ-
լով մեր աղջի համար մի խարդախ և վնասակար թշնամիկց
աղջատութեւ կամ վեր առնել մեր տուն ու տեղը և օտար տէ-
րութիւն քաշուել, և թողնել այս ողորմելի աղջը երեւ-
եալ և տատանեալ, անտէր և անօդնական: Այժմ դու հայր
ես քննէ և տես, կամ քս դուստրը աղջին պիտի զոհես, կամ
այսպիսի վտանգաւոր ժամանակ Վազգէնը և բոլոր Վրաց
աղջը թշնամացնելով աղջը քո դստերը պիտի զոհես,
(Խորին լուսթիւն):

Վ.Ա.ՐԴԱՆ :

Հայր, քո որդի Վարդանը իւր աղջի վերջին ու ամենի
աղջիկը չի որոշել իւր սիրելի Շուշանիկից, Վարդանի սրբ-
տի համար մի օրինակ սիրելի են իրահարապատ որդւոց հա-
ւասար բոլոր Հայ անուն կրողները, Հայր, եթէ աղջի փրա-
կութիւնը զոհեր կ'պահանջէ, Վարդանը պատրաստ է՝ ոչ
միայն Շուշանիկը այլև միւս իւր որդիքը, իւր սիրելի ա-
մուսինը, և վերջապէս իւր անձը ողջակէղ մատուցանելու,
թող Վարդանի և իւր գերդաստանի անունը Ծնջուի աշ-
խարհի երեսից, միայն թէ մնայ Հայոց աղջը • քանի որ
արեւ կ'ծագէ և լուսինը կլուսաւորէ՝ ուխտել եմ Հայոց
աղջը սիրել, ուխտել իմ Հայոց աղջի սիրոյն զոհել ինչ-
որ ունիմ, և այս ուխտից չի կարայ մեկնել ինձ ոչ Հայ-
րական գորովը, ոչ ամուսնական մեղկութիւնը և ոչ այլ
ինչ, որ կայ աշխարհումը : Թող Շուշանիկը զոհ լինի
Հայոց աղջի համար,

ՀԱ.ՄՅ.ԶԱ.ՍՊ

Երանիէ քեզ, Համապատ, որ Վարդանի պէս հայրենա-
սէր որդի ունիա, Վարդան, Վարդան, արի համբուրեմ այդ
սուրբ բերանը, որ արտասանեց այդ բառերը (Վարդանը համ-
բուրմէ հօր ձեռքը ենացըրը դրկելով համբուրմէ նորա բերանը) այսու-
հետեւ անհոգութեամբ թող մեռնի ծերունի համապատ,
որ իրանից յետոյ թողնումէ Վարդանի պէս հայրենասէր
որդի : (Դանարով գեպի միա որդիքը) Հմայեակ, Համապատեան,
իմ արեւ արդէն գեպի մուտքն է խոնարհել, ես արդէն
գերեզմանի ավն եմ հասել ահա, ձեր մեծ եղբայրը այ-
սուհետեւ պէտք է լինի ձեր հօր փոխանակ, սորա ա-

ուաքինական ընթացքը , սորս առ հայրենիս ունեցած սէ-
րբ՝ արժանացնումէ սորան լինել Սամիկոնեան գերդաստա-
նի հայր , և սա իր առաքինութեամբը պարծանք պէտք է
լինի իւր հօր հողացած ոսկորներին , իւր եղբարցը և բոլոր
հայոց ազգին : Ուրեմն համբուրեցէք ձեր մեծ եղբօր ձեռ-
քը և խոստացէք հօր տեղ ընդունել սորան : (Հմայեակը և Հա-
մազապեանը համբուրումեն Վարդանի ձևով և նա համբուրումէ նոյս հա-
կատը):

ՀՄՅՅԵԱԿ

Հայր , մեր սիրելի Շուշանիկի հարմախօսութեան խոր-
հուրդի ժամանակ ինչի՞ աղէկէզ խօսքերով խորովումէք
ձեր որդւոց սրտերը , մի՞թէ կասկածումէք , որ ձեր որդիւ-
քը ինչպէս մինչև ցայժմ իրանց ազգի նահամետական սո-
վորութիւնը . Աստուածային օրէնքները պահպանելով հը-
նազանդ են եղել , նոյնպէս և մինչև 'ի մահ հնազանդ պիտի
լինին իրանց մեծ եղբօրը , մանաւանդ այնպիսի եղբօր՝ ինչ-
պէս Վարդանն է , աղաջումեմ , Հայր , այդպիսի կասկած-
ներով և հրաժարականով չվիրաւորել ձեր որդւոց սրտերը :

ՀՈՒՄՈՉՈՍՊԵԱՆ

Հմայեակ , մեր հայրը 'ի հարկէ ցանկանումէ այժմ յառ-
ւիտնականութիւն երթալու , կէս դարից աւելի արդիւ-
նաւոր վաստակներով ծառայեցնա իւր հայրենի երկրին , իւր
ազգին և իւր թագաւորներին , նորա մարմինը ոտից մինչ
'ի դլուխ վէրքերի նշաններով ծածկած է , նա լաւ զիտէ ,
որ նորա համար պատրաստ է երկնքումը յաւիտենական
փառք , և աշխարհումը յաւիտենական անուն , Հմայեակ ,
մենք ձենաստանի արքայազուն ենք , մենք Սամիկոնեան

սերունդ ենք , մենք Համազասպի որդիք ենք , պատրաստ կե-
նանք մեր հիւրնկալ ազգին մեր քրիստոնէական սուրբ հա-
ւատոյն և մեր եկեղեցւոյն արդիւնաւոր վաստակները մա-
տուցանելու , այս հանդիսաւոր ժամուս մէջ խոստանանք
և ուխտենք մեր ազգի համար մեր կեանքը զոհելու , օրինակ
առնենք մեր սիրելի եղբօրից , որ իւր սրտի հասոր իւր աչ-
քի լըս Շուշանիկը ազգին բարօրութեան համար զոհէ է
մատուցանում , վասնողը արդէն մերձէ , Սասանեան Պար-
սից Վռամ թագաւորը , արդէն ծերէ և հիւանդ , շուտով
կթազաւորէնորա որդի Յաղկերուը , Յաղկերու՞ որին շատ լա-
եմ Ճանաչում , որին սրտի չար խորհուրդները լաւ գիտեմ .
քանիցս անկամ ներա բերանից լսել եմ «Հայաստանը Յունաց
կայսերութեան պատուալն է , քանդէ այդ պատը Յունաս-
տանը Պարսիցն է » և յիրաւի այդպիս է . բայց երանի թէ
Յունաց կայսենները հասկանային այս բանը , նրանք կրօ-
նական վէճերով և ժողովքներով են պարապում . նրանք Ար-
շակունեաց թագաւորութեան բարձման վերայ ուրախաւ-
նումեն , նրանք Հայաստանը Պարսից հետ լսրաբաժին առ-
նելով միսիթարվումեն , նորանք իրանց ապաստանեալ Հայ
նախարարների անունը և ազգը Ծննդելով յաղթական են հա-
մարում իրանց զլուխը և խորին քաղաքագէտ . բայց աւաղ-
մի հեղեղէ գալիս արևելքից արևելուտք , Հայաստանը ան-
օդնական մնալով , մանաւանդ թէ օդնութեան յոյս տու-
ողներից մանաւելով յետակորսոյս կլինի փառքով և ոչա-
նարդութեամբ , և այն ժամանակ վայը կուգայ և կ'սունի
Յունաստանը . Հմայեակ , ասածներս լաւ իմացիք , մի ենք
եղել մինչև ցայժմ , մի լինինք մեր եղբօր հետ , մի լինինք

ՀՄՅՅԵԱԿ



ուխտապահ նախարարների հետ, մինչև ՚ի մահ դէմ կես նահիք Հայաստանի թշնամեացը և մեր անձը զոհ նուիրենիք Հայաստանի փրկութեան համար : (Ընկնումն հօր ոսքը) Հայր, օրհնէ մեղի, որ կարողանանք այս մեր ուխտին վրայ հաստատ մնալ : (Համազասպը ձեռները դնելով իր որդւոց դիմերին ասումէ):

Հ.Մ.Ծ.Զ.Ա.Յ


Աստուած ձեր միջի սէրը և միաբանութիւնը անքականելի պահէ, Աստուած զօրացնէ ձեր սրտերը և բազուկները Հայոց ազգի, հաւատոց, աշխարհի և ազգութեան հետ պատերազմաղների դէմ, ելք, որդեակիք, ժամանակ է, արդէն Շուշանիկի մասին խորհուրդը մեր մէջ վերջացած է, հրաւիրեցէք արքայացն Զոջիկը և Մարդպետ և Բազրատունի իշխանները, խօսեցէք նոցա հետ հարսնախօսութեան պայմանների վրայ, ես կերթամ և կաղօթեմ ձեզ համար : (Դուրսէ գնում տեսարանից):

Վ.Ա.Ր.Դ.Ա.Յ

Հմայեմակ, հրաւիրէ Վրաց պատուական իշխաններին գալ մեղմուտ: (Հայեակը դնումէ) Համազասպեան, իմ որոշմունքըս արդէն հաստատ է, որ իմնազելի Շուշանիկը ընդունելի պատուադ մատուցանեմ՝ իմազգի օգտի համար, բայց լաւ չէր լինի արդեօք, նախ քան Վրաց իշխանների գալուստը այս լադ հուրելը յայտնէինք և ձեր հարս Դստիկին:

Հ.Մ.Ծ.Զ.Ա.Յ

Սերելի եղայր, դեռ խօսեցէք հարսնախօսների հետ, կարելի է քանը գլուխ չէ գալի, ինչու իդուր տեղը վրդուվէք Դստիկի մայրական քնքուշ սիրտը: Եւ ահա, նրանիք գալիս են (Ներս են մտնում Զոջիկ, Մարդպետ և Բազրատունի իշխանքը,



Վարդանի հետ սովորական ողջունատվոթիւնից յևոյ նստումն կարդանի Հմայեակը և Համազասպեամբ կամպնումն իրանց եղոր հանդէպ):

Վ.Ա.Ր.Դ.Ա.Յ

Պատուական իշխանիք, իմ ծերունի հօր և եղայրցս մօտ կարդացի մեր բարեկամ փառաւոր Վազգէն արքայի նամակը, շատ ուրախ ենք, որ նա ցանկանումէ նոր ազգակցութեան շաղկապով աւելի հաստատել մեր բարեկամութեան կապը:

ԶՈՉԻԿ

Այժ ո՛չ միայն իմ եղօր Վազգէնի, այլ Վրաց հողեւոր և մարմնաւոր իշխանների, այսինքն բոլոր Վրաստանի ցանկութիւնն է :

Վ.Ա.Ր.Դ.Ա.Յ

Բայց մի՞թէ Վրաստանումն Վազգէնի արժանաւոր աղջիկ չկար, որ Վազգէնը Հայաստանիցն է իրան համար հարսըն ընտրում:

ԶՈՉԻԿ

Վրաստանումը աղջկերք և զեղեցիկ աղջկերք շատ կան, բայց մայրեր չկան մարդկութեան, քրիստոնեութեան և ազգակցութեան սրբազն պայմանները կ'պահանջեն, որ մեր խօսակցութիւնը ո՛չ պարակական խորամանկութեամբ լինի և չյունական մնապարծութեամբ, մեր այսն՝ այս պէտք է լինի, և ոչն սչ, Ուրեմն իշխան, ես այս սրբազն պայմաններին հնազանդելով, և ինձ և իմ աշխարհքին անարդանք չամարելով պարզապար յայտնում եմ ձեզ իմ ներքին վեշտերը և կարծեմթէ այս պիտի լինի մի ազգի երջանկութիւն ցանկացող անձնի թացքը :

Սեր Վրաստանումն արժանաւոր մայրեր չ' լինելով ապահովութել կարք ու բարքը՝ մեր Վրաստանի կանայքը չունին հոգո իրանց տուն ու տեղի վրայ, սկսած արքունի պաշտոնից մինչ' վերջին ռամկի տունը չես դանում իրա ժամանակին սպաշտեղինաց պատրաստութիւն, մեր սովորական խօսքն է պիողն ու փարոյը ես քանիցս անդամ Պարսկաստան գնալիս անցեմ կայել Հայաստանից, գնումես մի զիւղ կամ քաղաք քանի մարդով կուզես, կես գիշերին վերարի մի անձանօթի դուռը, իսկոյն ընդ առաջ կ' վազեն պատռուով և ուրախ գէմքով կ' հրաւերեն իրանց բնակարանը, ուները և ձեռները կ' լուսնան, առատ սեղան կ' պատրաստեն, ձիերի համար մտածել անդամ հարկաւոր չե, նուրանք ես իրանց սեղանն ունին: Գանի օր կամիս կաց, կեր, խմէ, հարցնող չ' կայ, նվելս ինչ տեղից ես դախ, կամերը և ու կ' երթաս: Այս ամենը հոգացող տան ախկով ընթհաքնին է; Իսկ Վրաստանումը եթէ զիշեր ժամանակ մինի տունը դնացիր թէ զիւղ լինի թէ քաղաք՝ քաղցած պիտի քնես, որովհեաւ ինչ որ չունի ինչ կ' ուտեցնէ, Վրաստանի կանայքը աշխատութիւն չեն սիրել, նորանց զործքն է զուգուել, զարդարուել և մանդալ ։ զեռ այս ոչինչ, օրէցօր ապականութիւնը շատանում է: Պարսիկներին տեսնում են, նրանց ձեւը, նրանց շարժմանքը, նրանց շրերը և նրանց զերքերը և մաղերը ներկեն են վեր առնում. Յունաստանից եթէ մին կին եկաւ, իսկոյն նրանց ձեւն են վեր առնում, մինչև անդամ սարեցի կեկզիների մօտ ուրիշ բան չգտնելով նորանց պար խաղալու ձեւն են վերառել, և կը-

տեսնես որ ամէն դռան առաջ կամ կարի վրայ մօտ եղած հարսներ և աղջկերք առաւօսից մինչև Կ մօւթը թմբուկ կ' ածեն և լէկզեվար կ' խաղան: Մեր երիտասարդները ծերերուն չեն հնազանդիլ, մեր երիտասարդների մէջ ապականութիւնը այնքան տիրել է, որ հաւաաը անդամ նորասիրութեան կարգումն են զնում: Գանիցս անդամ լսել ենք նոցա բերանից, թէ կրօնը պէտք է հնազանդի զօրութեան, և ոչ թէ զօրութիւնը կրօնին: Թէ պէտք մեր հոգեոր հովվիւները, մեր խոհական ծերերը շատ են խօսում և իրասում բառնալ այդ կորստական սկզբունքները, բայց իդուր (Համազարկանցիր կղրօղ), (մէ, սարսափում եմ, այդ ժամանակով քիչ քիչ յանականի մէջ ես սկսուի և տարածուել): Այս պատճառաւ է, որ Վրաստանը Հայաստանից մայրեր է իննդրում, մայրեր, որ իրանց որդիքը իրանց կաթով մնուցանեն և ոչ թէ Վրաստանի կանանց պէս օտարի կաթով մեծացնեն իրանց որդիքը, մայրեր, որ մանկանց մատաղ մէջ ապաւորեն սէր առ Աստուած և առ Հայրենիս + մայրեր, որ իրանց որդւոց սրտերումն ապաւորեն Աստուծոյ երկիւղը և մարդկանց ամօթը, և ինչպէս որ ապականութիւնը արքունի պալատից սկսելով կ' ջնի յետին ռամկի տունը, նոյնպէս և առաքիւնութիւնը պէտք է նաև սկսէ արքունի պալատից, և առ պատիճան առ աստիճան տարածուի ռամկի մէջ: Եւ ինչ տեղից կարող ենք գտնել մեր ցանկացած մայրերը, անհաւատ Պարսիկներից, Աստուած մի՛ արասցէ, զուող Յշներից, ոչ բնաւ, բայց միայն Հայաստանից, որ նա միայն ինչպէս Վրաստանի քրիստոնէական լուսով լուսաւորելու պատճառ դառաւ, նոյն լցուր անշէջ պահելու և առաքինական գործաւ-

քերով նորա որդիքը լուսաւորելու պատճառ կարող է
դառնալ:

ՎԱՐԴԱՆ

Իշխան, ասած խօսքերդ բոլորովին համաձայն են մեր
եղբայր Վազգեն արքայի գրածներին՝ ևս պատրաստ եմ ձեր
կամքը կատարելու, և յոյս ունիմ, որ իմ դուստր Շուշա-
նիկը համաձայն լինի ձեր ցանկութեանը, բայց Վազգեն
արքայի կողմից, ներեցէք պարզախօսութեանս, փոքր ինչ
կասկածաւոր եմ:

ԶՈՉԻԿ

Ես երաշխաւոր կ'լինիմ, և խոստանում եմ ձեր դստեր
վրայ այն խնամքը ունենալ, ինչոր ունի մի գթառատ հայր
իւր հարազատ որդւոյ վրայ:

ՄԱՐԴՊԵՏ

Եւ ես.

ԲԱԳԻՑԱՑՈՒՆԻ

Եւ ես:

ԶՈՉԻԿ

Այս բանիս վկայ լինի մեր Փրկիչը, որ աներելութաբար
մեր մէջն է:

ՎԱՐԴԱՆ. համբուրելով Զոջիկին:

Ուրեմն շնորհաւոր լինիմեր նոր աղքականութիւնը, միա-
այն առ այժմմեր մէջ մնայ այս խօսքը, մինչև իմ ամուսին
գտնիլին ևս յայտնեմբանի որպիսութիւնը, և յետոյ կատար-
ենք նշանդրութեռն հանդէսը. (դուս են գնում Վարաց իշխանքը)
Հմայեակ, դստիկին այս տեղ հրաւիրէ,

ՏԵՍԱՐԱՆ Գ.

(Ներս է դալի դատիկը միայն, Վարդանը խորը մտածելով մանէ դալի,
յետոյ տեսնելով իւր կինը ասումէ):

ՎԱՐԴԱՆ

Տիկին, խնդրեմ նստել. քեզ համար աւետաւոր լուր
ունիմ:

ԴԱՏԻԿ

Բարի լինի, ինչ աւետաւոր լուր է :

ՎԱՐԴԱՆ

Աչքդ լցա իմ հայր համազասպի և իմ սիրական եղբար-
ցը համաձայնութեամբ մեր սիրելի դուստր Շուշանիկը նը-
շանագրեցի Վրայ Վազգեն թագաւորի հետ:

ԴԱՏԻԿ Խորը հասաչելով:

Եթէ իմ պատուական սկեսարի իմ տագերց և ձեր կամ-
քով իմ Շուշանիկին խուժաստան զըկէք, ես ինչ կարող
եմ ասել, ինչքան դուք զիտէք և կմտածէք, մենք ինչ
կարող ենք զիտենալ, միայն ներեցէք հարցնել ձեզ, միթէ
մեր Հայ տողոց մէջ չկան այնպիսի քաջ մարդիկ, որ ար-
ժանի լինին մեր փեսայութեանը: Մեզ համար ինչ են հար-
կաւոր օտարի թուխտ ու թագը, ես ամենելին չեմ մոռա-
ցել իմ պապ սուրբ Սահակի բանը «իմ վերաւոր ոչխարի-
օտարի առողջ գաղանից լաւէ» մենք այժմ թագաւորու-
թիւն չունինք, մեր թագաւորութիւնը երկնքումն է, բայց
իմաչքումը Հայի ամեն մի կտրիճ երիտասարդը մին մին թա-
գաւոր է. մենք մեր տունը շնելու աշխատենք, ուրիշե
տունը շնելու մեր աները չքանդենք: Ինչոր դուք Շուշա-
նիկի համար պատրաստել էք բահը ու բաժինք, ճորտ ու



ծառայ՝ մի վեր ընկած նախարարի տուն ոտի կ'կանգնէցնէ .
թէ ինձ կ'հարցնէք, ընտրեցնէք մի քաջ և խելօք Հայազդի
երիտասարդ, թէ ող ցած ազգից լինի, տունքն նրան մեր դուս
որը, առնք նրան ձեր ձեռքի տակը, քիչ ժամանակից յետոյ,
նա էլ կ'բաղդաւորւելի, մեր դուստրն էլ: Քանիցս ան-
գամ իմ պատուտկան սկեսարը ասում էր «Ճառն արմատով
է ծառ, տունն հիմամբ է տուն» Խշանն, այսօր դու մեր
աղջկայ համար օտար ազգի արքայազուն կամ արքայ կը-
ընտրես փեսայ, վաղը միւսը իշխանազուն կ'ընարէ, մեր
խելօք աղջկունքը, մեր կայքը կ'տանք օտարին, մենք կը-
մընանք դատարկածեռն, Խշանն, ես լաւ զիտեմ իմ: Չուշա-
նիկի քնքուշ սիրու, հաստառուն հաւատը և Ճշմարիտ ազ-
գասիրութիւնը, վաղը օտար երկրումը նորա հաւատին, կամ
աղջին դիպլոմի խօսք կ'ասեն, նորա համար մահէ և ան-
պատճառ կ'ասեն, այս աշխարհի սովորութիւնն է, մենք
այսօր մի բարձրութիւնից վեր ընկած բայց վեհ հոգւոյ աեր
ազդ ենք, վերաւորուած սրտի համար վարդով խփելն ան-
գամ՝ քարով խփելու հաւատը է, Խշանն, եթէ հնարի
փոխեցնք ձեր դիտաւորութիւնը և ձեր դուստրը առնք.
Հայազդի վերջին ռամպին, քան օտար ազգի արքայազնին:

ՎԱՐԴԱՆԻ խորը հասաչելով :

Տիկին, ասածներդ բոլորը Ճշմարիտ են, բայց միտքդ
կ'բերմա Աստուածաշնչի մէջ Շամունէի և նորա եօթը որ-
դուոց պատմութիւնը :

ԴԱՏԻԿ

Խշանն, միթէ հնարի է մոռանալ Շամունէի վսեմ դոր-
ծողութիւնը, ես ամենայն օր կարդում եմ Աստուածաշուն-

ը, ես լաւ զիտեմ, որ Շամունէն մի Աստուածապաշտ կին էր,
եօթը որդի ուներ Աստուածապաշունթեամբ մեծայրած,
հեթանոսները բռնազատեցին նորան և իւր որդւոցը, որ
ուրանան Ճշմարիտ Աստուածը և կուռքեր պաշտեն, նոքա
յանձնառու չեղան. Հեթանոսները նորա որդիքը մի առ մի
սկսեցին մօր աչքի առաջ չարչարել և սպանել, որպէս ոչ
մայրը իւր որդւոց սէրից յաղթուելով կատարէ նոցա կամ-
քը, բայց նա իւր որդւոց երդում էր տոլի, որ իրանց հա-
ւատի համար մեռնին, և սյամիս եօթը որդւոց վշտալի
մահից յետոյ, մահու մահնուեցաւ և ինքը: Այդ պատ-
մութիւնը, այդ սրտաշարժ պատմութիւնը Շուշանիկս զըլ-
նէ գլուխ անդիր գիտէ, մենք շատ անդամ երանի ենք
տուել այն երջանիկ կնոջը, և երանի կ'լինէր մեզ եթէ նո-
րա փառացը արժանահայլնէք :

ՎԱՐԴԱՆ

Ահա, յարմար ժամանակ, որ դու Շամունէ դառնաս
և քո դուստրը Շամունէի որդի :

ԴԱՏԻԿ

Ո՛չ, երանի՛ թէ այդ անուանը արժանի լինէի, բայց
ձեր միտքը չեմ հասկանում:

ՎԱՐԴԱՆ

Տիկին, ազգի ներկայ տարարախտ վիճակը զոհէ պա-
հանջում:

ԴԱՏԻԿ

Հայոց ազգի վիճակը զոհէ պահանջում, ահա ես, ա-
հա իմ որդիքս, ահա իմ բոլը տուն ու տեղս, արնք ինչ
որ կամիք :

ՎԱՐԴԱՆ

Ո՛չ, միայն քոսկրելի Շուշանիկին է ուղում։
ԴԱՏԻԿ

Իշխան, աւելի հետաքրքրութիւն պէտք չէ, Հայոց
ազդի քաղցր անուանը, Հայոց ազդի ապահովութեանը, Հա-
յոց ազդի երջանկութեանը կը զոհեմ իմ սիրելի Շուշա-
նիկս, թող նորա մայրը զրկուի իւր սիրելի առջկանից, միայն
Հայոց ազդը երջանիկ և ապահով լինի։

ՎԱՐԴԱՆ

Ուրեմն կանչեցի.ք իմ սիրելի Շուշանիկս, որ իմ վերջին
պատուերս տամ՝ (Դատիկո դուրս է գնում, Վարդանը մտնէ զափ սեն-
եակոմը աշքերի արտաստմբը սրբելով և ասում է) Ո՛վ անմահ Աստ-
ուած, իմ կինս Շամունէ է գառնում ոչ միայն լոկ խօս-
քով, այլ և գործով, կուզայ արշեռք ժամանակ, որ ես ևս
արժանի լինիմ Մակար է գառնալու ազգ, իմ սիրական ազդ,
Վարդանի վարդանման կարմիր արիւնը քեզ համար է պա-
հած, Վարդանը պատրաստ է մեռնելու քո ազգութիւնը
և կրօնքը ովահպանելու համար, վտանգը մօտիկ է որոշ-
մունքս հաստատ. (այս միջոցին նկա են մտնում Դատիկը և Շուշա-
նիկը, Վարդանը բռնումէ Շուշանիկի ձեռիցը և ասումէ)։

Շուշանիկ, իմ անթառամ՝ Շուշանիկ, իմ պատուա-
կան հօր, իմ սիրելի եղբարցս և քո մօր համաձայնութեամբ՝
քեզ նշանդրեցինք Վրաց մեծ և հզօր Վաղդէն արքայի հետ,
Աստուած շնորհաւոր անէ, բարով երթաս, բախտաւոր լի-
նիս, և ահա, քեզ հետ գալիս են բացի Վրաց իշխաննե-
րից և իմ եղբայր Հմայեակը, Գնունի Ցաճատը և Դիմաք-
սեան Թաթուլ նախարարքը իրանց թիկնապահ զօրքերով,

նմանապէս բաց 'ի քեզ համար նշանակած ծառայքը. քեզ
հետ կ'լինի քո դայեակ պառաւ Սանդուխով՝ եղբայրս իրա-
լնկերներով ձեր հարսանեաց հանդէսը կատարելոց յետոյ յետ
կ'դառնայ, բայց Սանդուխով միշտ պիտի մնայ քեզ հետ,
նա խնամք կ'տանի քեզ վրոյ մօր պէս, ինչպէս խնամք է տա-
րել մեր տեսնի վրայ յիսուն տարուց աւելի։

Բայց լոէ քո հօր վերջին կամքը, մենք գուցէ միւսան-
գամ այն տեղ երկնքումը (ցոյց աալիս երկնքը) տեսնելու ենք
միմեանց, իմացիր, որ զու Հայ ես, որ Սամիկոնեանց սեր-
ունդն ես, որ պահաւունի սուրբ Սահակայ թռոն ես՝
ուր որ լինիս ամբեղջ և անարատ պահէ քո սուրբ հաւատը,
պանծալի ազգութիւնը և քո վեհ հոգին, ցոյց ամւր,
աշխարհքին Հայոց ազգի վեհմութիւնը՝ ցոյց ամւր որ
արժանաւոր ծնողաց որդի ես, ամէնից աւելի սիրէ քո Ա-
րարիչը և Փրկիչը, հնապանդ եղիք քո մարդուդ և սիեսրան-
ցը, ամեննեին մաքէդ մի՛ հաներ սարսափելի մաշը, աշեղ
դատաստանը, անճառելի արքայութիւնը և ահաղին դժուս-
քը, գնաս բարով (համբարումէ իսր դուստրլ)։

ՇՈՒՇԱՆՆԵԿԸ Ընկնելով հօր սուքը։

Հայր, ո՛վ Վաղդէն արքայի թագը կարող է զարմացնել
Վարդանի գուստը, ո՛չ նորա ճնիս արքունիքը և ոչինչ
երկրաւոր փառքերից կարողէ շացնելիմ աշքերը, իմ աչքս
երկնքումն է, ես կ'հնապանդիմ ձեր կամացը, կ'երթամուր որ
կ'զիկէք.բոյց թող գիտենայ իմ հայրը երուոր աշխարհքը,
որ իմ հաւատեց, իմ ազգութիւնից ինձի չեն կարող խախանել
ոչ հրեշտակները, ոչ մարդիկ, ոչ տուր, ոչ հուր, ոչ ջուր և
ոչ այլ ինչ դառն տանջանք, պատրաստ եմ զբկիլ աշխար-
հի ամենայն բարութիւնից, պատրաստ եմ զբկիլ նա և կ'ան-

Քից, բայց արատաւրիելու չեմ Հայ աղջկանց անունը, այս է ահա իմ մշտնջենական ուխտու և այս է վերջին և անդառանալի խոստումս :

(Այս միջոցին ներս է մտնում Հմայեակը և ասում է)

ՀՄԱՅԵԱԿ

Այրելի եղբայր, մեր սիրելի Շուշանիկի ուղելորութեան ամենայն քանը պատրաստ է : Վրացի իշխանները՝ Հայոց նախարարքը և բոլոր մեծամեծքը սպասումեն նախագաւթի մէջ, իսկ Հայոց զօրքը կանգնած զրսի գաւթումը սպասումեն իրանց սիրական սպարապեաի նազելի դուստրը տեսանելու, և վերջին հրաժարականը ընդունելու :

Վ.Ա.ՐԴԱՆ :

Ուրեմն գնանք :

(Այս ասելով Վարդանը իրա գառեր ձեռքից բռնած դորս է գնում զբան մօս առաջ է գողի Զողիկ իշխանի, Վարդանը յանձնաւմէ Զողիկին իւր դուստրը ասելով)

Վ.Ա.ՐԴԱՆ

Խշան, ես վստահանալով ձեր խոստմանցը և երդմանցը, իմբոլոր գերդաստանի, և Հայոց ազգի հոգեոր և մարմնաւոր մեծամեծների համաձայնութեամբը, յանձնում եմ ձեր խնամոցը իմ նազելի դուստր Շուշանիկը. ուրեմն գնալք բարեաւ :

(Վարդանը և Զողիկը Շուշանիկի ձեռներից յանած դորս են գնում, դորականքը Շուշանիկին տեսնելով միաձայն երգում են)

ԵՌ հեռանաս քո մայրենի աշխարհից,

Կարօտ թողուս սերտ բարեկամք քեզանից.

Սեր ամենիս դու մայր էիր զթառաւտ,

Արդ հեռանաս մեղ մւթ պատէ անփարատ,

Փո սուրբ ձեռօք մեր վէրքերը շատ անդամ

Լուանայիր գեղ գնէ իր ամեն ժամ.

Գո մազերից ոլորէ իր վերակապ,

Գո բոլոր կեանքն ազգիու համար էր ագապ:

Արդ Հայոց զօրքն իւրեանց մօրից որբանոյ,

Վրաց ազգը քո խնամօք պերճանայ.

Հայաստանը զըկի իւր սուրբ Շուշանից :

Վրաստանը բուրէ հոտով քաղցրավեց :

Ուր որ երթաս, ուր որ լինիս տիրուհին,

Մեր սիրտ հոգին քեղ հետ տանիս մաքրուհի.

Գնաս բարեաւ մեր լյա հաւատն քեղ ընկեր.

Աջն ու խաչը քեղ պահապան դօր դիշեր :

Ազդ ու հաւատդ պինդ պահպանէ մէջ Վրաց,

Հայ անունդ միտդ պահէ անմոռայ.

Լոյս Հաւատիդ հաստատ կացիր յաւիտեան,

Լոյս հաւատդ քեղ միշտ պահէ անսասան :

(Վերջին տանը երդելիս բորբը սկսում են դուրս զնալ տեսարանից, եր զը աւարտուելից յետոյ և վարագուրը իջնումէ):



ԳՈՐԾ Բ.

ՏԵՍԱՌՈՒ Ա.

(Տեսարանը կատարվում է Վարաց արքայանիստ Ցիռիթայ (Մցիռիթայ) քաղաքամբ Վաղղէն արքայի պալատում, որ գարդարուած է Վարացի ձեռվի, վարդութը բացուելիս ներկայանաւմ են Զաջիկ իշխանը նասած տախոսի վրայ խորին տարակուութեան հմասնմանց մէջ, Ներս են մանում Մարդովիս և Յաղրասառնի իշխանները և խորը զլուխ տորով տառմ են):

ՄԱՐԴՊԵՏ ԵՍ. ԲՈՂԲԱՏԻՒ

ՈՂՀՈՒ ձեղմեծ իշխանն, (Ձոջիկը տարակուութեան մէջ ընկերած չէ տեսամամ նրանց և ինքն իրան խօսում է:

ԶՈԶԻԿ

Ո՛՛Ն, այս ի՞նչ վայ էր եկաւ մեր զլիին, այս ի՞նչ անարդութեան հասաւ մեր վեճակը, խիղճն անդադար մի որշ զունքի պէս կրծառումէ սիրոս։ Վաղդէնի ուրացութիւնը, քրիստոնէտկան հաւատոյ անարդութիւնը, Վարաց աղջի մէջ բացուելու ընտանի պատերազմը, իմ հարս Շուշանիկի և նորա որդիկերանց տարաբախտ վեճակը, մի առ մի տչքիս առջև նկարագրուելով, աչքիցս քուն են կտրել անձիցս գաղարումը։ Ես սարսափելի երդումով երաշխաւոր զառայ Վարդանի մօտ Շուշանիկի համար, հիմի ի՞նչ պէս կատարեմ իմ խոստումն, ն՛չ, մահ, մուր ես, հասիր, աղատէ ինձի այս նեղութիւնից, (այս միջոցին զլուխը բարձրացնէ և տեսամ Մարդովիս և Յաղրասառնի իշխաններին և տեղիցը վեր է թուզում և ասում) ներեցէք, իշխանք, ես ձեր զալուստը չտես-

սայ։ իմբանը այն տեղն է հասել, որ արթուն ժամանակն էլերաղ եմ տեսնում։

ՄԱՐԴՊԵՏ

Մեծ իշխանն, չ'ինի որ դուք կարծէք, թէ մենք լրաեսի պէս եկած թաքուն ձեր խօսքերը լսումէինք, մենք այդ ցածութիւնը ոչ արել ենք և ոչ անելու ենք, մենք ներս մտանք, ձեզ տարակուսած տեսնելով սովորականից աւելի մի քիչ բարձր ձայնով ողջոյն տուինք, բայց դուք երեխ թէ չ'լսեցիք մեր ձայնը, դուք խօսումէիք յուսահատ և աղէտալի խօսքեր, մենք վետացած մնացինք, երկնչելով, որ չ'լինի թէ մեր բարի իշխանի զլիին մի փորձանք է եկէլ։

ԶՈԶԻԿ

Ի՞նչ, դուք վախեցաք, թէ ես դժուել եմ, ձեր երկիրազը իզուր չէ, ես դժուելից վատ վիճակի մէջ եմ, ես կ'դժվիմ ն՛չ, ես անպատճառ կ'դժուիմ, և ոլլինի իմ տեղը, որ չը-դժուի։

ԲՈՂԲԱՏԻՒ

Ո՛Վ մեծ իշխան, այսքան տարի է, մենք ձեր ուրախութեանը ուրախակից ենք եղել, և ցաւոցդ վշտակից, միթէ չէ կարելի, որ ձեր վշտերը մեղ յայտնէք, դուցէ մի հնար գանենք։

ԶՈԶԻԿ

Զեղանից ի՞նչ ունիմ թաքցնելու, սիրելի իշխանք, և արդէն թաքցնելու ժամանակը անց է կացել այս քանի տարուայ Հայաստանի, Աղբանից և մեր սահմանների զլիին եկած տարաբախութիւնը լաւ կ'իտէք, Հայելի ցոյց տուած

Հաւատոյ հանդէսին՝ գրեթէ ականատես էիք, բայց ինչ
ժամանակ Վարդանը, յաւիտենական յիշատակաց արժանի
Վարդանը նահատակեցաւ սուրբ պատերազմի մէջ, քանա-
դուեցաւ Հայատանի բերդ ու պարխապը, այնօրից ես գիտէի
մեր զլիին գալեքը, և ահա, վայ ինձ, երէկ իմեղբօրից
պատգամաւոր կամաւելի լաւ ասել բօթաբեր եկաւ, նա
յայտնեց ինձ, որ իմեղբայրս քրիստոնէութիւնը սրամնց
ուրացելէ և Պարսից հաւատն է ընդունել. նա արդէն ճշշ-
մարիտ հաւատը թողած՝ արեգակէ պաշտում, և ինձ պատ-
գամէ զրկել, որ ես եկեղեցոյ սուրբ ուխտին, մեր իշխանա-
ներին և բոլոր ժողովրդեանը պատուիրեմ, որ սիրով և յար-
գանօք առաջ զնան նորա հետ գալող քուրմերին, պատիւ-
տանք նրանց և պատրաստ լինինք կրակատուններ շնելու և
կրակ պաշտելու, իւր պատգամների մէջ յատկապէս պատ-
ուիրելէր, յայտնել Շուշնիկին, թողնել Հայե սոպոռու-
թիւնը, գնալ ժամանակի հետ, և զնիքը և իրա որդիքը
պատրաստել մոդութեան օրէնքը ընդունելու :

ԲԱԳՐԱՏՈՒԵՒ

Ուրեմն, որ բանը բացուելէ՝ ներեցէք ինձ, որ ես իմ
սրտիս վէրքը ևս բանամ : Սորանից երկու տարի առաջ,
երբ Յաղկերտ արքայի հրամանաւ Հայոց, Վարաց, Աղուանից,
Ծոթէից, Լինաց և այլ քրիստոնեայ ազգաց մեծամեծները
զնացին Պարսից դուռը, ձեզ յայտնի է, որ ես ևս Վաղգէնի
հետ գնացի . ուխտապահ նախարարները երեսանց իր թէ
Յաղկերտի կամքը կատարեցին և յետ գարձան . Յաղկերտը
ամեն աղգից պատանդ ուզեց, Հայոց գաւաճան սիւնեաց
իշխան Վասակը իրա որդիքը թաղեց, միւս աղգերը ևս մե-

ծամեծներից պատանդ թողին, ես ձեր եղբօրից լնդրեցի,
որ ինձ պատանդ թողնէ, և ինքը ուխտապահ նախարար-
ների հետ դայ և մեր աշխարհի փրկութեան հոգսը քաշէ՝
նա ինձ ասաց, չէ՞ դու զնա, ես կ'մնամ պատանդ, եթէ դոցա
հետ երթամ, կամայ ակամայ դոցա հետ խորհրդակից և
դործակից պիտի լինիմ, դոցա խորհրդագը զլուխ գալու-
րան չէ, եթէ դոքա մի բան կարողացան անել, ես ևս քը-
րիստոնէական հաւատովս կուգամել կտիրեմիմ հայրենի
աշխարհին. ապա թէ ոչ Պարսից հզօր զօրութեամբը ա-
ռօք և փառօք կտիրեմ ոչ միայն Վրաստանին, այլև Հա-
յաստանին և միւս կործանեալ տէրութիւններին, զեռ այս
հերիք չէր, Յաղկերտին աւելի մաերմութիւն ցոյց տալու
համար՝ լնդրեց Պարսիկ կին առնուլ և նա տուեց նորան
իրա զոքանը :

ԶՈՉԻԿ

Այս, այս, Բօթաբերը ինձ ասաց, որ կինն ևս հետը բե-
րումէ, բայց ես վերահասու չեղայ, բայց դու իշխան բազրա-
տունի, այդ բաները ինչի մէնչև հիմայ չէիր յայտնում
ինձ :

ԲԱԳՐԱՏՈՒԵՒ

Իմ չյայտնելու պատճառները խիստ շատ են, ն ախ
որ Վաղգէնի վըէժինդրութենից վախումէի, երկրորդ՝ չի
կամենում ձեր եղայրական սիրտը վտացնեմ՝ երրորդ՝ կաս-
կածումէի, որ չլինի թէ Շուշնիկի ականջը հանի բանը՝
և նորա քնքուշ սիրտը վերաւորէ, և ես գառնամ նորա
մահուան պատճառ, միւս պառճառները մնան, մենք այժմ

մեր անելքը մտածենք , մէկս մէկու դաղբելով բան չեղառնալ :

ԶՈՉԻԿ

Ճշմարիտ են ձեր խօքքերը , այնպիսի ժամանակի ենք հասել , որ պիտի ասենք «Ե որ խմաստունն է՝ լրեացէ , զե ժամանակն չար է» . բոյց սրբէն վտանգը դուռն է հասել , լրելու ժամանակ չէ , ես այս զիշեր առանձին կանչեցի ինձ մօտ մեծ եպիսկոպոսը և դրան էրէցը , յայտնեցի նոցա Վաղաքէնի պատգամը , նոքա սաբաւափեց մն , նոքա հազար անէծքներ կարդացին նորսա զլիսին , նոքա պատրաստուեցան խաչը առնել ձեռքերը և հրաւ իրել ժողովրդին մանել խաչի դրօշակի տակ , սուր բառալ ու բայեալերի դէմթէն իրանց հարազարները լինին , նոքա ինձ յորդորեցին այս սուրը միաբանութեանը զլուխ դառնալ և վարդանոյ փառացը հասնել , և իրանիք երդամամբ խոստացան զւեսնղեանց պէս մեռնել քրիստոսի համար . բայց ես տղաշեցի նոցա , որ խորհելու ժամանակ տան , և ոչովի զեռ չյայտնելով վտանգը ծում ու պաս պահեն , հոկում , ժամ և պատրափ անեն , թերեւս դթայ Աստուած մեր վրայ և մեր մոքին մի զօրութիւն տայ փրկութեան հընարքը մտածելու :

ԲՈՂԲՍՈՒՆԻ

Ես զարմանում եմ , թէ ինչի՞ մենք այսքան տարակուասութեան մէջ պէտք է ընկդմինք , երբ որ Յունաց կայսերութեան պէս քրիստոնեայ հզօր կայսերութիւնը խաչի և նորսա երկրագուաց պաշտպան կոնդնած է . հողեւը և մարմնաւոր իշխանաց միաբանութեամբ աղաշնաց թուղթ զրենք

կայսեր , հասկացնենք քրիստոնէութեան վերահաս վտանգը , և խնդրենք օդնութիւն . նա խկյն իւր անշաղթ զօրքերը կ'առաքէ մեզ յօդնութիւն , և մենք նոցա հետ միանալով Պարսիկներին հալածական կ'առնենք մինչեւ ՚ի Պերսեպոլ , և մենք և մեր սուրբ եկեղեցին կ'աղաստուենք վտանգից :

ՄԱՐԴՊԵՏ

Ճէնց այդ է , որ դտար . Յոյները այնպէս կ'օդնեն մեղինչպէս օդնեցին Ճայոց միաբանութեանը . Յունաց կայսեր այժմ Մարկիանոսն է , նա հաւատոյ քննութեամբ է պարապում : Կոստանդնուպոլսոյ եկեղեցիներումը մէկդ մէկու վրայ բանադրանքներ են կարդում . Ճմարտութիւն քարոզողները կայսեր հրամանաւ տքարկում են , ժողովրդեան մէջ երկպառակութիւն , կադ և կրիւ է թաղաւորում . անօրէն Պարսիկը քրիստոնէութիւնը բառնալէ աշխատում , նոքա իբր թէ Աստուծոյ ամենայն խորհուրդները հասկացել և նորսա կամքը կատարել պրծել են , բանը մնացել է Քրիստոսի մի կամ երկու բնութիւն ունենալու վրայ . և ահա , սրա վրայ արիւն է , որ թափաւմեն : Քրիստոսը սէր է քարոզում , նոքա Քրիստոսի բանը թողած՝ նորս բնութեան վրայ կուր բանալով իրար միսն են ուտում , այդպիսի աղջի վրայ յոյս գնելը չար է , վնասակար է և կորստական , մենք այդպիսի աղջին թուղթ զրելեց զդոյշ կենանք , որ Ճայերի թղթերի պէս մեր թղթերն ես Յաղիերափ ձեռը ըլմատնուին , և մեր յետինը լինի չար քան զառաջնոր :

ԲՈՂԲՍՈՒՆԻ

Ուրեմն ճայն տանք մեր նախարարներին և իշխաններին , յայտնենք վտանգը և հրաւ իրենք ամեն մինը ոքքան կարելի

է զօրք հաւաքէ և գայ մեղ մօտ, մենք ևս միացնելով մեր
զօրքը, Աստուծոյն ապաւինենք և երթանք եկեղեցւոյ թշրւ
նամեաց դէմ, կամ մեռցնենք կամ մեռնինք.

Մ.Բ.Պ.Տ.Տ.

Կատ լաւ էք ասում իշխան, բայց մի՛ կարծէք, որ մենք
քնած ենք, մենք մեր նախարարներին և իշխաններին լաւ ենք
ճանաչում, արդէն նոցա մեծ մասը գնացել են Վաղդէ-
նին ընդ առաջ, և ընդունելով Պարսից կրօնքը միացել են
նոցա հետ և միացեալքը, այսինքն Կղարջեց, Զաւախաց,
Սամցիսէի, Քուիշաց, Կանգարաց և Սացխումէթի իշխան-
ները ինձ պատղամէն ուղարկել թէ նոքա կոռինձ Հայերի
կորուսը տեսնելով՝ ամեննեին կամք և միտք չունին պա-
տերազմելու Վաղդէնի հետ. Նոցա համար միեւնայն է, ինչ
կրօն լինի թող լինի, որ տէրութիւնը հզօր է և նոցա վը-
րայ տիրելու զօրութիւն ունի, նոքա այն կրօնքը. Կընա-
դունեն, և իրանց կեանքը և իշխանութիւնը հանդարտու-
թեամբ կվարեն, այժմ առացէք, ուն ենք ժողովում, և
Պարսից հզօր աերութեան և նոցա հետ միացեալ ուրացե-
լոց հետ պատերազմբաց անում:

ԶՈՉԻ

Իշխանք, դուք արդէն ձեր միտքը ասացիք և միմեանց
կարծիքը հաստատուն վաստերով հելքեցիք, այժմ լսե-
ցէք իմ միտքը. Աստուած մեր մեղացը բարկանալով մեղի
այս տարաբախութեամբ հասցրուց, որ ամենայն կողմից օդ-
նութեան գոները փակած են, մենք երեք հողի ենք մը-
նացել մեր սուրբ հաւատին հաւատարիմ, դիցուք թէ մի-
քանիսին ևս յորդորանքով, խոստմունքով և այլ հնարքնե-

րով կարողացանք միաբանեցնել մեղ հետ, դորանով ոչինչ
չենք կարող անել Վաղդէնի երկաթէ կամացը, մեր լուսանի
թշնամեացը և Պարսից հզօր զօրութեանը գէմ. Դիցուք թէ
մենք մեռանք, գորանով մեր անձը և հոգին կ'փրկենք. բայց
այլոց օդնել չենք կարող մանաւանդ թէ ողջ աշխարհին
մշնջենական կորսաւեան պատճառ կ'լինիք, ուրեմն արիք
մենք ճշմարիտ հոգւով միանանք միմեանց հետ, խոստա-
նանք և ուխտենք՝ սրտով սիրել և մինչև մահ պահել մեր
սուրբ հաւատը, երեսանց կատարենք Վաղդէնի կամքը, և
այս առիթով նու իրենք մեր անձը վշտացեալներին յայտնի
և 'ի ծածուկ օդնելու: Ո՞չ, ես սարսափումեմ, ևս տես-
նում եմ իմ իմաշչիս առաջը, թէ մոքան զոհեր պիտի ունեւ-
նանք հաւատոյ համար. Վարասանի հզումը թէ և վուշեր
շատ կան, բայց անուշահոտ ծաղկիներ ևս պակաս չեն, այս
զոհերի առաջներ պիտի լինի իմ հարս Շուշանիկը, Շու-
շանիկը, որի հայր անմահ Վարդանը զեռ հարսնախօսու-
թեան ժամանակ՝ յայտնեց իւր կասկածը Վաղդէնի վայ-
րաց մենք իշխանք, յիշեցէք այն սոսկալի ժամը, մենք
սարսափելի երդումալ երաշխաւոր եղանք, և նա իւր նա-
զելի գուսարը յանձնեց մեր խնամոցը, ուրեմն կատարենք
մեր խոստաւմը, կատարենք Աստուածայիրութեան և մարդա-
սիրութեան սրբազնան օքնքները, ասպենք միայն, որ օդ-
նենք վշտացեալներին.

Բ.Ա.Գ.Բ.Ս.Տ.Խ.Ե.Ւ

Ես համաձայն եմ:

Մ.Ա.Ր.Պ.Պ.Տ.Տ.

Եւ ես համաձայն եմ:

ԶՈՉԻԿ

Ուրեմն, իշխանք, վտանգը մերձ է, ուրիշ հնարք չկայ և ժամանակ կորցնելը առանց պատրաստութեան վտանգի մէջ ընկնիլ է, կանչենք Շուշանիկին և յայտնենք նորան իւր մարդու բօթաբեր հրամանը. Մարդպետ իշխան, գնա՛ և Շուշանիկին այստեղ հրաւիրէ :

(Մարդպետ իշխանը դուրս գնում, Զոջիկ և Բաղրատունի իշխանքը լուս նսուծ են և բաւական ժամանակից յետոյ ասումէ):

ԶՈՉԻԿ

Տէր Աստուած, այս ի՞նչ նեղ աւուր հասցրիր մեղի, ես ի՞նչպէս յայտնեմ Շուշանիկին Վազգէնի ուրացութիւնը, նորա անօրէն հրամանը. Քրիստոնէական հաւատոյ մօտավուտ վտանգը և մերնախարարների և համարեա՛թէ բուլը ժողովողեան Վազգէնի հետ միանալը. այս քանի՞ տարի է եղայրս Պարսից արքայի մօտ է, ես Շուշանիկի քնքուշ սիրու չվերաւորելու հսմար թաքցրի և սմենայն հնարքով թաքցրի Վազգէնի սառնութիւնը, Հայաստանի տակն ու վրայ լինիլը, Հայոց սուրբ հաւատոյ համար անձնազոհ պատերազմը, Վարդանի և իւր բնկերաց մահը, Վասակի և նորա համախոհների չարութիւնը, ուխտապահնախարարների և եկեղեցւոյ սուրբ ուխտի պարսկաստանի մէջ քաշած նեղութիւնը, և վերջապէս Մամիկոնեանց տան տեղի կործանումը, և Արարատեան աշխարհից տարագիր Մշու երկիրներ ապաստան լինելը, ես ամենը արի որովհետեւ հնարք ունէի, բայց այժմ վայ ինձ, գուժկան և գուցէ մահաբեր դահիճ պիտի դաւանամիմ հարսի, իմ սիրելի հարսի համար, իմ քրիստոնեայ աղօթասէր հարսի համար, ահա նա գալիս է (աչքիրը սրբում է):

(Ներս է մտնում Շուշանիկը Մարդպետ իշխանի հետ և տեսնելով իւր տարրը և Բաղրատունի իշխանը գունաթափ և տարակուսած՝ ինքն ևս տարակուսած ողջունումէ նոցա):

ՅՈՒՇԱՆԻԿ

Ողջյն ձեզ իմ պատուական տաղը և սիրելի Բագրատունի իշխանն, (նոքա առանց պատասխանելու դուխ են տալի, Շուշանիկը նստումէ տախտի վրայ, Զոջիկ իշխանը նստումէ տախտի միւս ծայրին, Մարդպետ և Բաղրատունի իշխանը նստում են կանգնած, բաւական ժամանակ մընում են լուս յետոյ ասումէ):

ՅՈՒՇԱՆԻԿ

Իմ պատուական տաղը, այս քանի ժամանակ է Հայաստանից մի հաւաստի լուր չունիմ, բայց թողնենք Հայաստանը, իմ սիրելի Վազգէնից ևս բաւական ժամանակ է նամակ չունիմ ստացած, այս գիշերուայ իմ խառն ՚ի խուռն երազները, այժմ մեան ձեր անակնկալ հրաւերը և ձեր տըս խուռ կերպարանքը ինձ կիսամեռ արին, լեղուս խօսումէ բայց սիրտս թոթուում, հենց իմանաս հողիս դուրս է գալիս. ասացիք աղաչեմ, իմ թագ ու պարծանք, իմ զլխուս պսակ Վազգէնից ի՞նչ լուր ունիք, չլինի՞ թէ նա հիւանդ է, ո՞հ, չլինի թէ նորու կենացը մի վտանգ պատահելով օտար երկրի մէջ, առանց մեզի վերջին հրաժարականը տալու՝ թողած լինի իւր ողորմելի կինը այրի և որդիքը որբ:

ԶՈՉԻԿ

Ո՛չ Տիրուհի՛, Վազգէնը մարմնով կինդանի է և առողջ: (Խորին լսութիւն):

ՅՈՒՇԱՆԻԿ

Իշխան, ես չեմ հասկանում ձեր խօսքը, բացայայտ խօսեցիք, լիերիք է տանջէք մի տարաբախտ կին, որ արդէն իւր

վշտերի ծովի մէջ ընկդմելու մօտ է. (Զոջիկ, Մարդպետ և Բաղրա-
ստունի իշխանքը չոքում ևն Շուշանիկի առաջը):

ԶՈՉԻԿ

Տիրուհի, քրիստոնէական սուրբ հաւատով զօրացրէք
ձեր սիրու, որ կարողանաք լսել մեր սարսափելի բօթը, կամ
թէ ձեր ամուսին Վաղգէնի դառն և սարսափելի հրամանը.
բայց ամենից առաջ կաղաքնք տիրուհի, ներել մեզ,
ոհ, 'ի սրտէ ներել, մենք յանցաւոր ենք ձեղ մօտ, մենք ենք
ձեր տարաբախութեան պատճառը, մենք երաշխաւոր ենք
ձեր անձին, բայց վայմեզ երաշխաւորութեանսուրբ պարտքը
վժարելու անկարող ենք, ձեր ամուսին Վաղգէնը քրիստո-
նէական սուրբ հաւատը 'ի սրտէ ուրանալով դալիս է Պար-
սից զօրքերով և մոգերի բաղմաւթեամբ. նա միւս կին է առել
Պարսից թագաւորի զոքանչը և ինձ պատգամէ դրկել, որ
յայտնենք ձեզի, որ դուք և ձեր որդիքը պատրաստ լինիք
ընդ առաջ դնալ Վաղգէնին և նորա կնոջը. ընդ առաջ
գնաք մոգերին, թողնենք ձեր հաւատը և երկրադութիւն
տաք արեգական և կրակին: (Շուշանիկը սակա առ սակա թուանում
է, ընկնում է բարձի վրայ և կիսակոտր ձայնով տառմ է):

ՇՈՒՇԱՆԻԿ

Հայի աղջիկը... Մամիկոնեանց սերունդը... Վարդանի
դուսարը... հաւատը ուրանայ... և կուռք պաշտէ... չէ,
նա կ'մեռնի... (Զոջիկը և միւս իշխանները վեր ևն կենում):

ԶՈՉԻԿ

Իշխանք, անսունումէք, որ այս ողորմելի կինը մեռ-
նումէ, հոսքրէք սթափողական դեղ, բժիշկ կանչեցէք,
(Մարդպետ իշխանը քթին մօսեցնումէ սթափեցոցին դեղը, Շուշանիկը աչ-
քելը բանալով առում է):

ՇՈՒՇԱՆԻԿ

Ուրեմնես, մ՛հ, երազի մէջ եմ թէ արթուն... ձւշ
մարիտ էին լսածներս թէ ցնո՞րը... (կրկն թուանումէ, կրկն
տակս են գեղը, փոքր ինչ ուշը վրան դալով առում է). իշխանք, ար-
դէն իմ հոգիս քաղվումէ, ես մեռնումեմ, իմ որդիքը
լաւ պահէք զուք ու ձեր Աստուածը....:

ԶՈՉԻԿ

Մարդպետ լշուն, կանչէ սորա որդիքը և աղջկերքը,
նոցա աղէկտուր ձայնը զուցէ ուշքի բերէ այս ողորմելինն.
խկ եթէ վտանդ պատահի, թող որդիքը ներկայ լինին և
վերջին օրհնութիւնը առնեն, (Մարդպետ իշխանը շուտով ներս
է բերում Միհրան և Վախթանգ որդիքը, Գէթէվան և Սոփիոյ զատերքը ու-
րոնք տեսներով իրանց մօր վիճակը և միաների սարսափը զարհուրեղը ա-
ղաղակում են) ոհ, այս ի՞նչ զարհուրելի անսարան է (յետոյ
չորսում են իրանց մօր տառաջ և տառմ են) ՄԻՀՐԱՆ. Մայր ջան ի՞նչ
պատահեցաւ քեզ, ոհ, ումն ես թօղումք քո սիրական որ-
դիքը, մայր ջան, քո Վարդանի սիրոյն, աչքոց բաց արան,
ապա թէ ոչ մենք ես կմեռնինք, ՄՐՓԱՅՑ. Մայրիկ, ողորմէ
քո աղջկանցը, ոհ, երկինք, այս ի՞նչ վայ է, որ բերիր մեր
ոլիսին. իշխանք, եթէ մեր մայրը մեռնում է, 'ի փառս
Աստուծոյ, Հանեցէք ձեր սրերը և մեզի մեր մօր ոտի տակ
մատաղ արէք: Մայր, լսէ՛ք Սօփիայի ձայնը, լսէ՛ նորա
աղաղակը, մի՛ խօսք տաք, մենքը մեռնում ենք. (այս միջոցին
Շուշանիկը աչքելը բաց է անում և տեսներով իսր որդիքը տառմ է)

ՇՈՒՇԱՆԻԿ Ո՛հ, տարաբախս որդիք:

ԲԱԳՐԱՏՈՒՄ

Տիրուհի, մի՞թէ զուք Հայի արիւն չունիք ձեր ե-
րակների մէջ, մի՞թէ զուք Համաշասդի թոռը, Վարդանի

դուստրը չէք, ինչի՞ն էր պէտք գիշեր ցերեկ Սաղմոս, Աւետարանն և Աստուածաշունչ կարդալը, եթէ որ նեղութեան մէջ համբերել չէք սովորում, քանի՞ անդամ ես պատահելեմ, որ դուք ձեր սիրելի որդի կնրանցը Շամունէի և Ցուրոյ աղէատի անցքերը պատմելով՝ խրառումէիք, որ նեղութեան և ձախորդութեան ժամանակ պէտք է յօյսը առ Աստուած զնել և անընկճելի մնալ:

ՅՈՒՅԱՆԻԿ

Խշանն, ներեցէք, ես ամաչում եմ իմ փոքրութիւնից և ձեր յանդիմանութիւնից, բայց ինչ անեմ, Վազգէնի սէրը և իմ որդւոց վրայ ունեցած գորովը յաղթահարեցին իմ քաջարութեանս:

ԲՈԳԻԱՏՈՒՆԻ

Աերեցէք, Տիրուհի՛, իմ ասածս յանդիմանութիւն չէք, այլ քաջալերութիւն, և ինչպէս կյանդիմի ծառայն իւր տիրովը յանդիմանել:

ՅՈՒՅԱՆԻԿ

Ո՛հ, իշխանն, այսուհետեւ մի՛ յիշեր ծառայ և տիրուհի բառերը շուշանիկը տիրուհի չէ այլ ևս, Շուշանիկը անարգումէ արքունիթագն ու պատկը, Շուշանիկը այն օրը վայ տուեց իւր զլանին, որ օտար աղդի մարդու հետ պսակիւցաւ: Շուշանիկի և բոլոր Հայերի ճակատի վրայ դրոշմածէ հալածանք, նեղութիւն, վեշտ և նահատակութիւննու շանիկը հնազանդէ իւր աղդի ճակատագրին, և երբէք արատառորելու չէ այն դրոշմը, որ նորա փառքն է և պարծանքը. Շուշանիկը յանձն կառնու ամենայն չարչարանք և վիշտ, և ցոյց կտայ աշխարհին, որ արքունի թագն ու դաւազանք

խոնարհվում են աշխարհասիրութեան զեկի առաջ, բայց մի տկար օտարական Հայ աղջեկի քրիստոնէական հաւատց անշաղթելի զօրութեամբ, ոտի տակն է առնում աշխարհի փառքերը և վկայ է լինում Ճշխարտութեան:

ԶՈՉԻԿ

Իմհարս, իմնազելի՛ հարս, մի բան ունիմ ասելու ձեզ, բայց լաւ դիտեմ, որ իմ ասելիքս անարգութիւն է ինձ համար, միայն թողլ սրտագէտ Աստուածը իմանայ մեր խորհուրդը և դիտաւորութիւնը, արիք ձեր ամաւանց, ձեր որդւոց և մեր բոլորի փրկութեան համար ընդ առաջ գնացէք Վազգէնին, գոնեա երեսանց կատարեցէք նորա հրամանը և յետոյ կամաց կամաց համազեցէք նորան թողնել հետանութեան օրէնքը և դառնալ զէպ ՚ի Ճշմարտութեան ձանապարհը:

ՅՈՒՅԱՆԻԿ

Զէ իշխանն, մինչեւ հիմայ ձեր հարսն էի և ձեր որդին. և այս տասն և հինգ տարի է երբէք ձեր հրամանին չէ ասսծ չունիմ, բայց այժմ հարսն եմ երկնաւոր թագաւորին, դուք այսուհետեւ իմհայրս էք և բարեկամս և ոչ տագարըս. ես բնաւ տեսնելու չեմ Վազգէնի երեսը. քանի որ նա կուռքերի երեսը տեսնում է, ես աւետարանի աշակերտ եմ, իմ Փրկիչը, իմ մարդականը Փրկիչը ասումէ ովլոր ինձ կուրանայ մարդկանց առաջը. և ես նրան կուրանամ իմ հօրս առաջը, որն որ երկնքումն է»:

ԲՈԳԻԱՏՈՒՆԻ

Վայ մեզ: (Այս միջոցին մի զօրապետ ներս է մանումէ ասում է):

ԶՈՐԱՊԵՏ

Վաղեն արքան իւր բոլոր բազմութեամբ գալիս է
և խիստ բարկացած է. (դուրս են զնամբ բոլոր, մնումէ միայն Շոշա-
նիկը):

ՏԵՍԱՐԱՆ Բ.

Յանկարծ ներս է մանում Վաղենը, Շոշանիկը կամենումէ դուրս զնալ,
Վաղենը բանումէ նորս կոնից և դուռմ է:

ՎԱՐԴԻՆ

Կամակիր Հայի աղջիկ, այս Բնչ է քո արածը, դու ինձի
խայտառակեցիր իմ բաձր աստիճան կնոջս մօտ, Ճշմար-
տաքարող քուրմերի և բոլոր պարսկական դօրայ առաջը :
Ի՞նչպէս յանդզնեցար իմ հրամանս չկատարել և չգալ ընդ
առաջ, և այդ բաւական չէ, իմ եղբօր և բազրատունի և
Մարդպետ իշխանների հետ իմ տանս մէջ ժողոված՝ դաւա-
ճանութեան խորհուրդ է, ք անում:

ՅՈՒՇԱՆԻԿ

Աւրեցէք, արքայ, Հայերը մէկպ մէկու դէմ դաւաճա-
ճանութիւն անել դիտեն, բայց իրանց տիրոջ դէմ ոչ բնաւ :

ՎԱՐԴԻՆ

Ուրեմն Բնչպէս յանդզնեցար դու իմ հրամանս չկա-
տարելու և ընդ առաջ չ'գալու:

ՅՈՒՇԱՆԻԿ

Դու Բնչպէս յանդզնեցար Ճշմարիտ Աստուածը ու-
րանալով կուռքեր պաշտելու :

ՎԱՐԴԻՆ

Իմ Ճշմարիտ Աստուածը նա է, որ Պարսից մեծաղօր

արքայն է պաշտում և որը որ կապակցութիւն ունի իմ օդուի
հետ. ևս Հայերի պէս անխելք չեմ, որ իմ արքութիւնը, իմ
աշխարհը և իմ անձը վտանգի մէջ ձգեմ հաւատոյ հա-
մար, բնութեան օրէնքն է, միշտ ակարը հզօրին պիտի հնագ-
ղանդի :

ՅՈՒՇԱՆԻԿ

Եթէ բնութեան օրէնքը Ճանաչումն էս, ուրեմն Բնչ-
պէս ապստամբեցար ամենաղօր Աստուծուց :

ՎԱՐԴԻՆ

Այ կի՞ն, ես առանց էն էլ ձանձրացել էի քո քարոզնե-
րից, կինն ով, մարդուն քարոզելն ով. գուն մոռացել ես
որ պակասելս ինձ հնազանդ լինիլ խոստայար, քո պաշտած
օրէնքը ևս այգպէս չէ՝ հրամայում:

ՅՈՒՇԱՆԻԿ

Այն, արքայ, մեր քրիստոնէական սուրբ օրէնքը հրա-
մայումէ մեզ, որ կինը իրա մարդուն հնազանդ լինի, և Հայ
կանայքը այս օրէնքը լաւ են պահպանում. նոքա ամենայն
ձախորդութեանց մէջ լծակից և հնազանդ են իրանց մար-
դուն, քանի որ մարդը հնազանդ է իրա Արարչնն : Արքայ,
դուն քո մանկութեան օրից միլրասւելլութեմնել ես Աստու-
ածպաշտութեան և քրիստոնէութեան անունով, մինչեւ
քառասուն և հինգ տարեկան հասակդ բիւր անդամ նոյն
հաւատոյ դաւանութիւնը տուել ես հրապարակաւ և առան-
ձին, այժմեթէ դու իրաւունք ես համարում մերժել այն
հաւատը, միթէ ես իրաւունք չունիմ մերժել իմ հնազան-
դութեան խոստումը, ես պակասել եմ քրիստոնէայ մարդու-
հետ, ես խոստացել եմ հնազանդ լինիլ քրիստոնէայ մար-

դու, այժմ ևս հնազսն է կ'լինիմեթէ իթողնէք կռապաշտութիւնը և ի՛պաշտէք ճշշմարլտ Աստուածը :

Վ.Ա.Զ.Դ.Ե.Ն

Կամակոր լին, ես արդէն քեզ ասացի, որ ես ձանձրացել և մ քո քարողներից, կինը մարդուն քարողելու իրաւունք չունի, շուտով ասա, պիտի թողնես քո կամակորութիւնը և հնազսնդիս իմպաշտած Աստուածներս պաշտեւն:

ՅՈՒՆԱՆԻԿ

Վազգէն, այն մարդը, որ փոխումէ լոյսը խաւարի հետ, և ճշմարտութիւնը ստութեան հետ ամենայն կնկանից միմարագոյն է, ես քո մոլորութեան ետեից դալող չեմ, ինչ անելու ես արա շուտով: (Վազգէնը սուրբ հաներով վրայ է հասնում և ասոմ է):

Վ.Ա.Զ.Դ.Ե.Ն

Ասա շուտով, հնազսն դելու ես թէ չէ: (Նոշանիլը ուշտիափ վերէ ընկնում, ներսէ վազում ջոջիկ իշխանը, և նորահետ նուշանիկի որդիրը և աղջկերը որոնք վաթաթվում են իրանց մօրը):

ՅՈՒՆԻԿ

Արքայ, դա ձեր կինն է, որա ձեր որդւոց մայրն է, դա նսխարարագուն է, ես դորա կենաց երաշխաւոր եմ, սպանեցէք ինձ և աղատեցէք այդ կեսակենդան տառապելը, (Վազգէնը ձեռքով մի կողմն է դցում իրա եղորը և ասոմէ):

Վ.Ա.Զ.Դ.Ե.Ն

Ապերախտներ, ես իմ հայրենի աշխարհը փրկելու համար այսքան տարի Պարսից դուռը մնալով հաղեւ հաղիմ հաւատարմութեան վրայ վատահայրի Յաղկերախն, այժմ այսպիսի մի կամակոր կին իմ բոլոր չանքս պիտի փչայնէ, և

իմամենասիրելի պարսիկ կինս պիտի գրէ իրա փեսին, որ ես ոչ միայն ողջ վրաստանը, այլև իմ տկար կինս անգամ չեմ կարող կարձնել դէպ՝ ի տէրութեան կրօնը:

Վ.Ա.Զ.Ը.Ն.Գ

Հայր, մեր մայրը անմեղէ, մեր մայրը ձեր հեռաւութեան ժամանակ գիշեր ցերեկ աղօթումէր ձեզ համար, այժմ այս ի՞նչ բարկութիւն է, սպանէ՛ մեզի հայր, մենք առանց մեր մօրը արդէն մեռած ենք • ողորմէ՛ մեր մօր վրայ, հայր:

Յ.Ա.Զ.Ի.Կ

Արքայ, ողորմեցէք այս ձեր տարաբախս որդւոցը, դուք գիտէք, զոքա լինչպէս են սիրում իրանց մօրը, արքայը ըշտապելից վնասներ կառաջանան, ամէն բանին ժամանակ պէսպէ է:

Վ.Ա.Զ.Գ.Ե.Ն

Ի՞նչ ժամանակ:

Յ.Ա.Զ.Ի.Կ

Արքայ, մի քանի օր ժամանակ տուէք, մենք կ'իրաւունք Շուշանիկին, դուցէ կ'համաձայնի:

Վ.Ա.Զ.Գ.Ե.Ն

Լաւ, ահա ձեզ երեք օր ժամանակ, եթէ երեք աւուր վրայ չի կատարիլ իմ հրամանը, ամենաղաւոն չարչարանքներով հալու մաշ կանեմ դորան, և դու ևս սպրձնելու չես իմ սպառնալիքից: (Ջոջիկը դուրս է տանում Շուշանիկին և նորա որդիկերանցը):

Վ.Ա.Զ.Գ.Ե.Ն մայն

Այս ի՞նչ ձախորդութիւն է, որ իմ բռնած ճամբուս առաջին քայլափոխումը ինձ պատահումէ, եթէ ես այդ կա-

մակոր Հայի աղջկանը չ' նազանդեցնեմ , իմ բռլոր խոր հուրդներս կ' քանդուին . Յազկերտ արքայն իսկցն կ' կասկածի ինձ վրայ , և այն ժամանակ իմ աշխարհն ևս Հայաստանի տարարախտութեանը կ' հասնի : Չէ , տէրութիւնս պահպառ համար ամենայն ինչ պիտի զոհեմ . Հայերին ի՞նչ օգնեց իրանց հաւատոր , որ ինձ ի՞նչ օգնէ : Բայց Ճշմարիտը խօսելով Հայերի տունը քանդեց երկպառակութիւնը . այդ ազգը , այդ հզօր և խելացի ազգը , եթէ միաբանասէր լիւնի ի՞նչեր չե անելու . նոցա տունը քանդեց Վասակը և նուրա համամիտ նախարարները . Պարսիկները երկպառակութիւն զցելու համար շատ հնարադէտ են . Վարդանի հետ միաբանելոց պատերազմը սարսափեցրուց Պարսկաստանը . այն զարհուրելի առիւծ Յազկերտ , իւր զօրպալար Մուշկան նուսալաւորդի գիրը կարդալիս՝ երկշոտ նազասատակ դարձաւ : Հայերի մէջ , այն , ուրացեալներ կային , բայց Վարդանի հետ միաբանեալներն ևս շատ կային , իսկ ինձ հետ ովէ միաբանելու , և եթէ միաբանենք ի՞նչ կարող ենք առնել : Չէ , ես Յազկերտին խօսք եմ տուել , ես երդում եմ արելոր Վարսասանը կրակապաշտ շինեմ , եկեղեցիքը կրակատուն փոխեմ և քահանայքը մող . այս բանս կանեմ Պարսից անընկա ճելի զօրութեամբ և պէտք է սկսեմ նախ իմ տանից , իմ կնոջից և իմ որդիկերանցից օրինակ սալ ուրիշներին :

(Այս միջոցին ներս է մտնում սենեկապետը և զնելով Վազգէնի առաջ մի կապոց առում):

ՍԵՆԵԿԱՊԵՏ

Արքայ , այս կապոցը զրկեց ձեր կին Շուշանիկը , սորա մէջ են իւր թագուհութեան շորերը , և ինձ հրամայեց ասել

ձեզ , որ նա այսուհետեւ թագաւորի կին չէ , նա երկնաւոր թագաւորի հարսն է , նորա համար հարկաւոր չեն այս հանգերձները : (Այս ասելով կապոցը դնումէ տախտի վրայ):

ՎԱԶԳԻՆ (բարկանալով)

Գնան , շուտ իմեղքօրս ասա՞ բերէ ինձ մօտ այն կամակար կինը , որդիքս և աղջկերքս չըերէ , թող նրանց արգելէ մի սենեկի մէջ , որ ոչինչ չիմանան : (Սենեկապետը դուրս է զընում):

ՎԱԶԳԻՆ միայն

Իմ յիմար եղբայրս ասումէ , խրատենք դուցէ համազուի . զեռ նա Հայերին լաւ չէ ճանաչում , զեռ նա չի գիտեր , որ Շուշանիկը կամակոր Վարդանի դուստրն է : Երկուտարի առաջ բռլոր քրիստոնեայ նախարարները Յազկերտի խորհրդականի խորհրդով , երբ կամեցան Յազկերտին խաբել , և երեսանց նրա կարքը կատարել , ի՞նչ քաշեցին մինչև Վարդանին իրանց կամակից շինեցին . նրանց մեծի , պատկի , կնկան և մարդուն խօսքն է՝ կ' մեռնենք և չենք ուրանալ : Ես չեմ մոռանում այն խօսքերը , որ Յազկերտից Հայաստան զրկած մողակետը խօսումէր հրապարակաւ «Եթէ իրանք Աստուածները անդամ մեղ օդնելու դան , մազութեան օրէնքը Հայաստանումը հաստատութիւն դանելու չէ» նորա այնպիսի մարդկի են , որնք ոչ կատանքից են վախենում և ոչ տանձանքից և որ աւելի չարն է , իրանց հաւատով մեռնելը , ուրացութեամբ ապրելից լաւ են համարում : Այսպիսի աղջի աղջկը իմ եղբայրս խրատելով պիտի իմ կամքիս հնազանդեցնէ , ես լաւ գիտեմ , որ այդ անկարելի բան է . չէ , ես իմ գիտեցածս կ' անեմ , այնքան կ' ըսրչարեմ , որ

մեռնի նա, որպէս զի Պարսից տէ բութիւնը և իմ հպատական իմրա խմանան, որ իմ խոստումն հաստատ է և ուխտա անսպառնալի (այս միջոցն ներւու են զալի ջոջիկ իշխանը և Շուշանիկը, Վաղդէն բարկամալով) Զոջիկ, ուրէ, ինչի՞ չկատարեցիր խոստումդ, այդ կամակոր ինոջ արածը հերիք չէր (ցոյց է տալի շորերը) այսօր դայանդնելէ ինձ մօտ զրկելիւր արքունի շըրերը և ապապրել, որ գա այսուհետեւ իմկինը չէ. ես ընդունում եմ քո խօսքը, ով մոլորեալ, դու այսուհետեւ ոչ միայն իմ կինս չեմ, այլ և իմ թշնամիս ես, ես քեզ ցոյց կտամք կամկորութեան պատիժը: Դահիճք ներս է զալի դահճապետը եւ կու դահճներով) պատրաստեցէք տանջանաց գործիքները:

ՅՈՒՆԱՆԻԿ

Վազգէն, ինձ տանջանքներով չես կարող վախեցնել, տանջանքը Հայի ճակատագիրն է, Հայի մասունքն է ու պարծանքը. տանջ՛ ինչքան կամիս, մաս մաս կարատէ՛ մարմինս, բայց հոգիս անմահ է և խիղճս մաքուր + պատրաստէ՛ ինձ համար այնպիսի չարչարանաց գործիքներ, որը որ միայն սատանան կարող է մատծել. ես իմ հաւատս ու բացող չեմ, ես ժամանակաւոր տանջանքից և մահից վախեցող չեմ. ես քեզ վրայ եմ ցաւում քրիստոնէական կարեկցութեամբ, որ ինքդ յաւիտենական կորստեան անդունդը գլորուելով, իմ անմեղ մանկանցս, և քո աշխարհիդ կորստեան պատճառ պիտի լինիս :

Ա.Ա.ՁԻԿԻ

(Սուրբ քաշում է, և վրայ է համուռմ Շուշանիկին ասելով) Զայնդ կարէ՛, թէ չէ լեզուդ արմատից կ'կարեմ.

ԶԱՅԻԿ

(Բոնելով եղրօր ձեռիցը և մի կողմ տանելով ասում է.) Իմ եղբայրական պարտքս ստիպում է ինձ խորհել և խօսել Զեր օդտի համար. դուք բարկացած էք, դուք Զեր արարմունքի վերջը չէք մտածում, դուք հրամայսւմէք դորան չարչարել այս տեղ մայրաքաղաքիս մէջ, եկեղեցւոյ ուխտի և քրիստոնէիցից բաղմութեան առաջը. նա յօժարութեամբ յանձն կ'առնու չարչարանքը և կ'շարունակէ իւր քարոզները, այն ժամանակը մեծ եւպիսկոպոսը, դուան էրէցը և բոլը հուգեւորականքը, (որոնք արդէն դամացած են ձեղանից) ուժիկը հանեն ժողովուրդը, և գիտէք դորանից ինչ վատ բաներ կ'ծագին: Ուրեմն լսեցէք Զեր եղբօր խորհուրդը, դրկեցէք դորան թաղիլիս, հրամայեցէք ձգել մահապարտից բանտը, և այնտեղ առանձին չարչարեցէք որքան կամիք, որ կամ մեռնի անյատութեան մէջ կամ կատարէ ձեր կամքը:

ՎԱՅԻԿ (փաքք ինչ մտածելից յետոյ)

Քո ասածները ուղիղ են Զոջիկ, այդ Հայերը կախարդաներն են, և ով գիտէ ժաղովրդեան առաջը հրաշքներ ևս ցոյց տան, դորանով մեր խորհուրդները կ'խափանվին. ես համաձայն եմ ձեզ հետ, թաղ դա իւր սև օրերը չարչարանօքանցնէ Մեսեեխի բերդումը և իմանայ թէ ինչ կ'նշանակէ իրս մարգուն և թաղաւորի կամացը չ'հնազանդուիլը, (դանարդ գէպ ի դահճապետը) գահճապետ, կապեցէք այս թշնառական կինը և մի լաւ ծեծելից յետոյ, ոտու քաշէ քաշ տարէք թաղիլիս, յանձնեցէք բանդապետին և յայտնեցէք իմ հրամանս, որ գորան դնեն մի մութ բանդի մէջ, ոչ ովիչ չըթողնեն դալ գնալու, օրը մի անդամմի կտոր հաց և մի քիւ

ջուր տան . ես հրամայեցի բերդի դէմուգէմ կամուրջի միւս
երեսին կրակատուն շինեն , շաբթէն երկու անգամ թող
տանին դրան կրակատան մօտ և ստիպէն կրակին երկրպագու-
թիւն տալու , եթէ կատարէ հրամանս շուտովինձ առեւ-
տիս բերեն և պարզե ստանան , ապա թէ ոչ կրկին ծեծե-
լով ձգեն բանտը մինչեւ մեռնի :

(Շուշանիլը թուլանումէ , զինորները վերեն քաշում տանումին և վարա-
դոյրը իջնում է):



ՀԱՆԴԻՍ ԵՐԲՈՈԴ

ՏԵՍԱՐԱՆ Ա.

(Տեսարանը կասարվումէ թիֆլիզ Միտելի բերդումը մութ բանդի մէջ ,
Շուշանիլը նստած միայն բանդի մէջ և ձեռները կապած մոռք ազօթք է
անում , զալիս է նորա մօտ բանդապատը և ասում է :

ԲԱՆԴԱՊԵՏ

Կերեցէք տիրուհի , որ ես իմայցելութիւնս ու շացրի ,
այսօրը ձեր այս բանդը գալից յետոյ ինձ համար տարի
դարձաւ , աչքս մնաց արեգակի վրայ , մարիկ եմ տալիս դէպ
՚ի երկինքը՝ դեռ լոյս է , անհամբերութիւնը ինձ խեղդումը
էր , շատապում և խիստ շտապումէի , թէ երբ կ'մթնէ , որ
երթամ իմ սուրբ թագուհու ոտները համբուրեմ , և նե-
րողութիւն խնդրեմ իմ դառն պաշտօնս կատարելուս համար :

ՇՈՒՇԱՆԻԿ

Բայց դուք ովկէք , որ այդպիսի կարեկցութիւն էք ցոյց
տալի մի տառապետալ կնոջ վրայ , որին մասնելէ Սատուած
ուստիկ պատիժների իւր մեղաց փոխարէն :

ԲԱՆԴԱՊԵՏ

Տիրուհի , ես այս թշուառութեան տան , այս բերդի
բերդապահ , և այս բանտի բանտապետն եմ . իմ պաշտօնս
զարհուրելի է , ես նշանակած եմ Վաղգէնի անօրէն հրա-
մաններին կատարօգ բայց ես նուիրել եմ իմանձս թշուառա-
կանների կարեկցութեանը , ես այս սարսափելի պաշտօնին
անյարմար եմ , բայց ինչ անեմ , իմ տէրը , իմ բարերարը ,



Զ՞՞ջեկ իշխանը ինչ ժամանակ լսեց իւր եղբօր ուրացութիւնը և Պարսկաստանից վերադարձը, ինձ կանչեց և ասաց սիրելի Արսէն, մեր աշխարհի և մեր ազգի թշուառութիւնը արդէն մօտեցել է, շուտով մեր բանտերը անսմեղ ողջերով կլքյուխն, ժամանակը այնպէս վտանգաւորէ, որ անմեղութիւնը յայտնի պաշտպանութիւն չի կարող դանել և միայն մնում է մեզ վշտայեալներին ծածուկ կաւընկից լինիլ, և ահա, ես կարգում եմ քեզ Միտեխի բերդին բերդապահ և մի անգամայն բանտապետ բանտապետ բառը լսելիս՝ զարհութեցայ, մազերս փշաքարեցան, ընկայ իմ տիրոջ ոտքը և խնդրեցի պատաս պահել ինձ այդ զարհութելի պաշտօնից, բայց նա ասաց, սիրելի Արսէն, յանձն առ այդ դառը պաշտօնը, որ միջոց ունենաս վշտացածների դառնութիւնը քաղցրացնել, մեր բանդերը այսուհետեւ գողեր, աւագաներ և մարդապաններ լքյուելու չեն, այսուհետեւ մեղքը անպատիժ կմնայ, և արդարութիւնը կ'պատճուի, այսուհետեւ քրիստոնէական սուրբ Հաւատոյ վկայքը պէտք է բանտի մշջ հալին և մաշին, և ով կարայ այն տարաբաղդների վերաը թեթևացնել, զոնէ մի քաղցր և սփոփիչ խօսքով, եթէ ոչ դու: Սորա պէս շատ բաներ խօսեցաւնա, վերջապէս համոզեց, որ Աստուածսիրութեան և մարդասիրութեան սուրբ հոգին թաքցնեմ այս զարհութելի պաշտօնի վերաբուի տակը, և իւրաքանչեւր նահատակի հետեւ ևս նահատակուիմ, Այն օրից, որ ես յանձն առայ այս պաշտօնը կամաց կամաց զանազան պատճառներով հեռացրի այս սեղից այն պաշտօնակալքը և զինուորքը, որոնց վրայ կասկածանք ունեի, և այժմ բաւականին ասպահով



եմ ուրեմն թոյլ տուե՛ք ինձ, տիրուհի՛, արձակել ձեր կապերը, որ մի փոքր դիւրութիւն գտնե՛ք:

ՆՈՒՇԱՆԻԿ


Ես շնորհակալ եմ ձեր կարեկցութիւնից ողարոն . ես չեմ կամենում իմ դիւրութեամբս այլոց վնաս տալ, ես մի տարաբախտ կին եմ, թողէ՛ք ինձի մնալ ինչպէս որ կամ, իսկութեամբ կատարեցէ՛ք Վազգէնի զարհութելի հրամանները, ինձ համար դիւրութիւն չ'կայ աշխարհքումը, իմ դիւրութիւնս երկնքումն է :

ԲԱՐԴԱՊԵՏ

Այս դիշեր ձեզ այս բանաը բերելից առաջ, եկաւ այս տեղ իմ բարերար Զոջիկ իշխանը, մի հասարակ զիւղաւկանի շորերով և ոտով, որ ոչով չիմանայ նորա այս տեղ դարձ, ինձ յայտնեց մի առ մի ձեր վտանգը, և հրամայեց, որ ամենայն տեսակ ինամբ ցոյց տամ ձեզ վեց, պատուիրեց դրսից կատարել Վազգէնի անօրէն հրամանը, շաբթէն երակու անգամ տանել ձեզ կրակատան մօտ, բայց ծեծելու պատուերը կատարել իր թէ ծածուկ, թագուհութեան պատիւը պահպանելով, և ուրիշ ինչ հարկաւոր պատուերներ պէտք էր տուեց և զնաց: Տիրուհի, ես թէպէտ մի անուսումն իսկզ մարդ եմ, այնու ամենայնիւ քրիստոնեայ եմ, ես պէտք է կատարեմ իմ Փրկչիս և բարերար տիրոջ Զոյջիկ իշխանի հրամանները . ես իմ կինս և որդիքս մինչև ի մահ պատրաստ ենք ձեզ ծառայելու: (բանտապետը ետ է անում կապերը բատի, երբ վերջացնում է Նուշանիլլ հանումի մատից մի թանկապին մատանի, երկարացնումէ դէպ ի բանտապետը և ասումէ):

ՆՈՒՇԱՆԻԿ

Ագնիւ բանտապետ, ես էրէկ իմ արքունական շորերը



Վազգէնին զըկեցիրայց մոռացմամբ կամդուցէ Աստուծոյ
կամեցողութեամբ այս մատանին մնացելէ : Ա'խ , այս մա-
տանին իմ հօր եղայր Հմայեակի տուածն է , առէք այս
մատանին ձեր երախտեաց փոխարէն + սա այսուշետե ինձ
հարկաւոր չէ , և ով դիտէ ի՞նչ անօրէնի ճանկը կընկնի :

ԲԱՆՏԱՊԵՏ

Տիրուհի՝ մի՞թէ դուք կարծումէք , որ մի խեղճ մարդ ,
հարկից ստիպուած մի դառն պաշտօնի մէջ որ լինի , առա-
քինութիւնը զնահատակել չեկարող . մի՞թէ կարծումէք ,
որ մի տարաբախտ ազդի մէջ , որի թաղաւորը անօրէն է և
մոլորեալ , չեկտանվել մի մարդ , մի յետին ռամիկ , որ մար-
դասիրութիւնը ոչինչ աշխարհային փոխարինութեամբ չը-
ծավէ : Տիրուհի՝ , ներեցէք համարձակութեանս , դուք ին-
ձի շատէք վշտացնում , դուք ինձի կապանէք , եթէ միւս-
անդամ այդպիսի առաջարկութիւն անէք . դուք ինձի ան-
բժշկելի կը վերաւորէք , եթէ իմ արածներիս բարերարու-
թեան անուն տաք . երանի թէ ես կարողանամ արդարու-
թեան պարագը վճարել . ես բարերարութիւն անելու կա-
րողութիւն չունիմ . բարերարը միայն Աստուած է :

ՇՈՒՇԱՆԻԿ

Սերեցէք ինձ , ապնիւ բանտապետ , որ միամսութեամբ
վշտացուցի ձեր առաքինի սիրար . առէք այս մատանին , պա-
հեցէք ձեզ մօտ իբրև աւանդ , և իմ մահից յետոյ՝ տուէք
դորան իմ մեծ որդի Միհրանին . ա'խ , սիրելի զաւակունք ,
Միհրանին ասացէք , որ նորա տառապեալ մայրը բանտի
մէջ էրվումէր իւր սիրասուն որդիերանց համար . բանտի
մէջ աղօթումէր նոյն հոգւոյ փրկութեան համար , առ-

աացէք Միհրանին , որ այս մատանին կրէ իրա մատումը ,
և յիշէ իւր տարաբախտ մնյրը : (աչքերը սրբումէ)
(Բանտապետը համբուրումէ Շուշանիկի ձևոքը և ասում է):

ԲՈՆԳԱՊԵՏ

Կատ բարի , տիրուհի՝ . ես այս սրբազան աւանդը երբ
և իցէ տեղը կհասցնեմ , այժմ կէս զիշերէ , փոքր ինչ հան-
գըստացէք , մնաք բարեաւ :

ՇՈՒՇԱՆԻԿ

Գնաք բարեաւ , իմ պահապեան հրեշտակ :

ՏԵՍԱՐԱՆ Բ.

(Շուշանիկը բանտի մէջ ծնկան վրայ չոքած ասում է): Տէր Աստու-
ած , հազար բերան փառք քո նախախնամութեանդ , ես մի
մեղաւոր անարժան կին եմ , իմ մեղքիս արժանի պատի-
ժին է , որ ահա , այս վեց տարի է զառն չարչարանքներով
այս մութ բանտի մէջ , ուե պատերից աւելի ոչինչ չեմ
տեսնում . շարթէն երկու անդամը յերաւի ինձ դուրս են տա-
նում , բայց վայ այն դուրս տանելուն , տանում են կրակա-
տան մօտ և ստիպում են կրակին երկրպագանել . չզիտեմ
մինչեւ երբ պիտի շարունակեն այս իրանց յիմարութիւնը .
մի՞թէ մինչեւ հիմայ չհասկացան , որ վարդանի գստեր համար
այդ մի անկարելի բան է . յիրաւի բանտապետը և իւր բնա-
տանիքը ինձ հետ շատ լաւ են վարփում . բայց ի՞նչ օգուտ .
մինչեւ երբ այսպիսի թշուառութեամբ իմ կեանքս պիտի
անցկացնեմ . չայսատանից իմ սիրելի չայսատանից լուր չու-
նիմ . իմ հօրից , իմ մօրից , իմ տուն ու տեղից ոչինչ տեղեւ
կութիւն չկայ . մարդս կորսական ճանապարհի վրայ

ինձ թշնամի , որդիկերանցիցս ամենելին համբաւ չունիմ . շատ անգամ այս իմ զարհուրելի վեճակը ինձ այնպէս է նեւ դայնում , որ ուղում եմ այս քարափի զլիսից լնինիմ քուր և վերջայնեմ իմ թշնառ կեանքս . բայց քրատոնէական սուրբ հաւատը արգելումէ ինձ . արգելումէ , որ յաւիտենական կրոստեան չմատնեմ իմ հոգիս . արգելումէ , որ Հայ աղջկանց անու ան վրայ փոքրովութեան և անհամբերութեան արատ չ'դնեմ (չէ) , ևս պիտի ապրեմ մինչեւ այն օրը , որ այս անդին դանձը (ցոյց է տալիս վզից Քաշարած խաչը) մի հաւատարիմ մարդոյ ձեռք յանձնելով՝ հասցնեմ իմ հայրենի աշխարհը . պիտի ապրեմ , որ մի Հայ քահանայ ճարեմ և իմ քրիստոնէական վերջին պարտքս վլարեմ . պիտի ապրեմ , մինչեւիմ հայրենի աշխարհից մի լուր ստանամ : Դու , մարդասէր Աստուած , կատարէ քո աղախանոյդ այս վերջին ինդիրները և այն ժամանակ եղիցին կամք քո : (Այս միջոցին ներս է մանում բանտապետը և մի օտարական մարդ հետը , բանդապետը օտարականին ցոյց տալով ասում է) :

ԲԱՆՏԱՊԵՏ

Տիրուհի , իմ բարերար իշխան Զոջեկը այս մարդուն դրել է ինձ մօտ և առանձին նամակաւ գրել է , որ ներկայացրնեմձեղ . նա ինձ գրումէ , որ սա Մշու երկրիցն է դալի , ինքը արեղայ է և անունը Անդրէաս , սա շորերը փոխել է , որ ոչով կարծիք չ'տանի . դուք լաւ դիտէք , եթէ Վաղգէնը իմանայ սորա քրիստոնեայ ևս առաւել հոգեօրական լինիւլը , բոլորս իմիասին կորած ենք :

ՇՈՒՇԱՆԻԿ

Կորհակալեմ քեղանից , բարի բանտապետ , Աստուած

վարձատրէ իմ պատուական տաղեր և քո ինձ համար արած հողացողութիւնքը . ո՞չ , երեխ թէ Զոջեկ իշխանը իմաշցել է , որ շուտով գուրս կուգայ իմ մահուան վճիռը , վասնորոյ մարմնոյս փրկութիւնից յոյսը կորած , հոգւոյս փրկութեան հոգմն է քաշում . սիրելի բանտապետ , թողէք մեզի մի փոքր ժամանակ առանձին :

ԲԱՆՏԱՊԵՏ

Կատ բարի տիրուհի , միայն կաղաչեմ , շուտով Ճանապարհ դցեցէք այդ մարդուն , որ չ'լինի թէ ոքմին տեսնէ կամ իմանայ , և այն ժամանակ վայր կուգայ կտանի մեզ : (Այս ասելով բանտապետը դուրս է զնում) :

ՇՈՒՇԱՆԻԿ

Հայր , դուք արդէն իմ հոգիս զօրացրիք , ինձ երկնաւոր թագաւորին զինւոր շնուցիք , իմ խիղճս մաքրեցիք և ինձ անմահական հայով կերակրեցիք . Աստուած անպատճառ կվարձատրէ իւր մոլորեալ ոչխարին համար արած ձեր հոգացողութիւնը . այժմ ինդրումէմ ասացէք , ինչպէս է իմ ցանկալի Հայաստանի վիճակը , ի՞նչպէս են իմ հայրս , իմ մայրս և իմ բոլոր աղջոյինքս :

ԱՆԴՐԵԱՍ

Կերեցէք , տիրուհի , ևս այդ մասին մի խօսք անդամչեմ կարող ասել :

ՇՈՒՇԱՆԻԿ

Պատճառ :

ԱՆԴՐԵԱՍ

Պատճառ , պատճառ որ խօսք եմ տուել :

Ում:

ԱՆԴՐԵԱՍ

Բարեպաշտօն Զոջիկ իշխանին :

ՇՈՒՇԱՆԻԿ

Իմ բարեբար տաճքը, և աղնիւ սրտի և զգացմանց աէր,
Զոջիկ իշխան, այս ո՞րքան խնամքէ, որ դու ցոյց ես տալի քո
տարաբախադ հարսին, ուլեմն Հայաստանի համբաւները դա-
ռն են և բօթաբեր, որ դու արդելել ես մինչև ցայժմ և ար-
գելում ես ինձ իմացնելու . Նորհակալ եմ քո հոգացողու-
թինից, բայց իզուր, ես խնդրել եմ իմ Արարչեց, որ չառնէ
իմ հոգիս, մինչև իմ հայրենիքի անցքերին չտեղեկանամ.
ես կհասնեմ իմ ցանկութեանս, անպատճառ կհասնեմ :
Ուրեմն հայր, ես չեմ ստիպել ձեզ, որ ինձի իմ հայրենիքից
լուրեր ասէք, և ստիպելս ես անօդուտ կլինի, որովհետեւ
հայր միշտ հաւատարիմ կլինի իրա խոստումը կատարելու,
թաղ ես մի քիչ ևս տաճնջմիմ այդ կրակով. (հանումէ ծոցից մի
փոքրիկ ծրար և ապիս է Անդրեասին) առէք այս փոքրիկ ծրարը,
սորա մէջը անդին զանձ կայ, դորա մէջ մի թուղթ ևս կայ.
այն թղթի մէջ ես զրել եմ այդ զանձի ինչ լինիլը, ինչպէս
իմ ձեռս անցնիլը, և թէ ի՞նչ պէտք է անէք այդ զանձը,
նմանապէս զրել եմ մինչև այս օրս իմ զլինին անցած չարն ու
բարին, ես ձեզ երդում եմ տալի, որ շուտով շատ շուտով հե-
ռանաք այս աշխարհից և երբ որ Հայաստանի օրհնեալ հողը
մանէք, այն տեղ բանաք այդ ծրարը, և ինչպէս զրածէ,
այնպէս կատարէք տարաբաղդ Շուշանիկի վերջին կտակը,
գնաք բարեաւ, ձեր այս տեղ երկար մնալը վասնդաւոր է


Ճեղ համար, մանաւանդ մեր բարի բանտապետի համար:

ԱՆԴՐԵԱՍ

Մնալը բարեաւ, կենդանի նահատակ քրիստոսի. ես խ-
կութեամբ կկատարեմ ձեր կտակը, դուք զօրացիք Տէրամբ.
որ ինչպէս սկսելէք այնպէս կատարէք, Տէր բնդ ձեզ:
(Անդրեասը դուրս է գնում):

ՇՈՒՇԱՆԻԿ մրայն

Բնութիւն, այս ի՞նչ հրձուանք է, որ զգումնեմ քո մէջը.
ոհ, ի՞նչպէս զարմանալի կերպիւ զօրայնում է վհասեալ սիր-
ալ երկնային մխիթարութիւնը . ով, անմահ Աստուած,
այս ի՞նչ սէր է, որ դու ցոյց ես տալի մարդկային աղջի վը-
րայ . հէնց իմանաս երկնքի գաները բացուել են և ինձ հը-
րաւ իրում են ներս մտնելու, ես գնալու պատրաստ եմ, ար-
դէն իմ սրտի երկու բազմանքը կատարուեցան, մնայ միայն
մինը, այն ևս անշուշտ կկատարուի . իմ առ Աստուած ու-
նեցած հաւատոս Ճշմարիա է, իմ յօյս հաստատ է և սէ-
րսս անփոփոխ : Ով աշխայժ, այս քսան և մի տարի է իմ հայ-
րենի աշխարհից հեռացած օրից կապելէ իր բերանս իմ սո-
վորական երգերս և տաղերս երգելու . իմ բանաստեղծական,
հոգին հէնց իմանաս բանտի մէջ շղթաներով կապած էր,
այժմ այն բազմամեայ բանտի գոները բայցուած է երեւում
և շղթաները ետ արած . երկնք ու երկիր իմ աչքիս իրանց
ստեղծագործութեան առաջին օրուայ նորութեամբն են
երեւում . թող քո կամքու լինի ծածկաղիտ բնութիւն, կը-
բանամբերանս և կերգեմ Հայաստանի գողորիկ եղանակաւ,
ինչ որ դուն կը ելադիես : (Ակսում է երգել):



Յառաւօտ կենաց գուսանիս,
 Ցարշալոյս աւուրց անմեղիս
 Խորշակ մահուան տարածի,
 Ա՛խ, լոյս աչայս պակասի :
Ա՛յ ծանօթ լերինք և հովիտք,
 Ա՛յ պայծառ դաշոք ծաղկափթիթք.
 Ահա, 'ի ձէնջ հրաժարիմ,
 Փութով երթայց 'ի շերիմ:
Դիմք դսաերք տոհմին Հայկազեան,
 Շուրջ գինեւ կացէք միաբան
 Երգեցէք զերգս հարսնութեան,
 Միշտ տօնեցէք զիմ վախճան :
Եղելոյս ծնողք յաւալի,
 Մնասցեն առանց զաւակի.
 Տէր, տուր նոցա սիրտ արի,
 Մեղմեա զմորմոք դառն վշտի :
Աւասիկ երամք հրեշտակաց,
 Առ երկին կան թևատարած。
 Զիս հրաւիրեն յԱղին բաց,
 Զիս կոչեն հարսն հօր փառաց :
Կարէն քօղն իմ հարսնութեան,
 Փոխարկի 'ի պատան թաղման。
 Իմ պձնազարդ հարսնարան
 Եղեւ այս մութ բանտարան :

ՏԵՍԱՐԱՆ Գ.

(Յոշանիկի հրգելու ժամանակը զալիսէ մի ծեր մարդ Հայաստանի շորերով զաւազանլ ձեւին կուզ ի կուզ մանէ զալի բերդի բոլորքումը, Շուշանիկի մօտ զալիսէ բանտապետը և ասումէ):

ԲԱՆՏԱՊԵՏ

Տիրուհի՝ ներեցէք համարձակութեանս յայսնել ձեզ,
 որ դուք յիրաւի՛ երկնային զօրութեամբ ողեւորուած, մի նոր
 աշխոյժ էք ստացել . դուք որ այսքան տարի մեղ հետ խօս-
 մելն անգամ խնայում էիք, այժմ քաղցրախօս տատրակ
 էք զարձել . բայց ձեր քաղցր ձայնի արձադանքը գիշերուան
 զերեզմանական լուսութեան հետ խառնուելով, մինչեւ մեր
 ամենախորին բանտերն է թափանցում, և տարաբաղդ բան-
 տարկեալները զոները կոտրատումեն, որ դուրս գան, և այդ
 հրեշտակաձայն երդիզը տեսնին . դրանից վատ բան առաջ
 կուգայ, մենք յաւիտեան կ'կորչինք :

ՇՈՒՇԱՆԻԿ

Աերեցէք, բարի բանտապետ, շուտով կազատուիք իմ
 ձեղի տուած նեղութիւնից : Ես իմ Արարչեց երեք բան եմ
 խնդրել որ այն բաղձանքներիս հասցնէ, և աւպահողիս առնէ :
 Այս գիշեր մի զարմանալի կերպիւ երկու խնդիրս կատարեց,
 մնաց միայն մինը, այսինքն իմ հայրենի աշխարհից և իմ
 ընտանիքից մի լուր ստանալը, և այն ժամանակը ես կ'մեռ-
 նեմ հանգստութեամբ, և դուք կ'աղատուիք ինձ վրայ հո-
 դացողութիւնից և չար մարդկանց կասկածանքներից ,

Ո՛հ տիրուհի, կ'աղաջեմ ներել ինձ. ձեր մահը ամեւնիս համար մահ է. ձեր աշխ տեղ եկած օրից՝ իմ կիսա առաքինութեան գաղափար է դառել, որդիքս և աղջկերքս ձեր օրինակովը և խրատներովը իրանց մատաղ հասակի մէջ հաւատոյ համար արի նահատակներ են դառել. դուք մի՛ կարծէք թէ նոքա միայն ձեզ են ծառայում, ոչ, նոքա ամեւնայն վշտայեալների վրայ խնամք են տանում, քաղցածներին հաց են տալի, ծարաւներին ջուր, մերկերին հանդերձ, հիւանդներին այցելութիւն են անում վիրաւորների վէրքեւրը իրանց ձեռքովլուանում են և դեղ են դնում. թերուահատներին ձեր օրինակովը քաջալերութիւն են տալի, մէկ խօսքովինչ որ ձեռքերիցը կուդայ վշտայեալներին սփոփելու համար չեն խնայում. մեր զարհուրելի բանտարանը առաքինութեան գործնական վարժարան է փոխուել. այս բոլորը ձեր օրհնութեան, ձեր օրինակին և ձեր հոգեոր խրատների պտուղն է, ուրեմն մենք ինչպէս կարող ենք մեկնիլ ձեզ նման սուրբ դաստիարակից: Զէ, մենք կ'մեռնինք՝ իմիասին, որ և ՚ի միասին յաւիտեան ապրենք: Միայն, ախրուհի, այս երկու օր է, որ մի Հայաստանցի ձեր մարդ լալով և կոծրով բերդի բոլորքը ման է գալի և խնդրումէ ձեզ աեսանել. մենք երկիւղ կրելով նրան շատ բարկացանք և շատ ըստ պառնալիքներ տուինք, որ հեռանայ այս տեղից, հնար չեղաւ, ողբրմելին անուտիւ անխմիլ Շուշանիկ ասելովլաց է ըլում և գերի նման աղաչումէ մի բոպէ ձեզ մօտ թողնելու. ես արդէն ամենայն վտանգ յանձս եմ առել ձեր աղօթքը այսքան տարի է ինձ պահել է և էլի կ'պահէ, ուրեմն

կ'հրամայէ՞ք, որ այն ծեր մարդուն ձեզ մօտ բերեմ:

ՇՐԻՎԱՆԻԿ

Ո՛վքարի բանտապետ, կ'աղաջեմ ձեզ՝ ՚ի սէր երկնաւոր թագաւորին շուտով այդ մարդուն բերէ՞ք ինձ մօտ՝ բանդապետ գնում, Շուշանիկը չոքումէ ծնկան վրայ և ասումէ) Ո՞վ իմ մարդապետ քրկիչ, արդէն իմացայ, որ իմ մահուան, իմ ցանկալի մահուան բոպէն հասելէ, արդէն երկու խնդիրս կատարեցիր, մնայել է միայն մինը, և այն ևս այժմ կատարվումէ. այս ի՞նչ անսպառ խնամք է, որ զու ցոյց ես տալի քո մեղաւոր աղաւնոյդ, այս քսան և մի տարի է, որ բեւը անգամ մահ է ի խնդրում, հազիւ այսօր պիտի թողնեմ այս վշտայի աշխարհը և դիմեմ քո զիրկի. (այս խօսքերը խօսելիս ներս են մանում բանտապետը և Հայաստանցի ծերը, վիրջինը խոկյն ընկեռումէ Շուշանիկի տոի առջև և անխօս մնումէ, բաւական լութիւնից յետոյ ծերն ասումէ):

ԾԵՐՈՒՆԻ

Շուշան, դու Շուշան, գոչեմ բարձրաձայն,
Զայնիկս լսէ՛, և տուր պատասխան.
Քո հօր սուրբ հոգւոյն եղբարցդ արեւուն
Խնդիրս լսէ՛, ինձ ասա՛ մի բան:
Քո գահի՛ ՚ի Մցիսէթ, ՚ի մեծ պալատին
Այս տեղ ի՞նչ կանես, քարափի գլխին.
Ո՞ւր են քո դուլեր, ուր ճորտ ու ծառէք,
Ո՞ւր Հայ պաշտօնեայք, զոր բերեր բաժին:

ԵՌԵՆԱՆԻԿ

Հայ մարդ, ուստի՞ գաս, ասա՛ համարձակ,
Զի՞նչ ճաղատ ճակատդ, զի՞նչ հերքդ սիստակ.
Եղեշէ՞ն ես դու, իմ հօր դպրապետ,
Թէ Յովսէփ, Ղեռնդ կար Ոշտուն, Սահակ .

Երկնից թագուհւոյն փութամ ես 'ի գիրկ,
Հասել է իմ ժամս, աշխարհս է ինձ չիք .
Մնամ Հայ երկրից մի խապրաբերի,
Որ երկրիս անցից լինի կենդան դիբք .

Չուտ ասա՛ ի՞նչպէս կայ իմ Հայաստան,
Ո՞ւր իմ հարազատք ։ ՞ւր իմ հայր Վարդան .
Ո՞ւր բանակք Հայոց, ՞ւր զօրք զօրավարք,
Ո՞ւր ժողովք, սուրբ հարց, ՞ւր մեծ կարաւան :

Հայ, դու ինչի՞ լսս, Եր խապրիկ չասես,
Ես եմ տարաբաղդ, դու էր կակաղես,
Հայոց Շուշանիկն յօտար հող տնկած,
Դունից և հոտից զըկի ինձի պէս :

Դիրտակ Հայ վարդի օտար երկրի հող
Նա էլ ինձի պէս լինի դունափոխ .
Հայաստանի վազն տնկէ 'ի Հիւսիս,
Այլ հաղող չետայ, բայց միայն ազոխ :

Իմ կենաց վէսը ասելու ժամ չէ՝ ,
Զայն այլք պատմեն քեզ, աշխարհք զայն դիսէ .
Շուտ ասա՞ ։ ՞վես, ի՞նչ խապրիկ ունիս,
Ի՞նչ անցք են անցել յիմ սուրբ հայրենիս :

ԾԵՐՈՒԵՒ

Չեմ ես Եղեշէն, ովքարի տիկին,
Ո՛չ Յովսէփ, Սահակ և ո՛չ Գարեգին .
Ո՛չ Ղեռնդ էրէց, ո՛չ մեծերից ոք,
Այլեմ 'ի թուոյ ձեր ծառայից հին .

Ծերուկ ծառուկն եմ ես 'ի Մշու գամ:
Որ ձեր աղջին է այժմ ասպնջարան,
Բազմավիշտ Եղեշէն զիս առ քեզ զըկեց,
Զեռն 'ի ձեռն յանձնել քեզ զայս պահարան :
(Տալիս է մի թղթի ծրար)

Քո հօր, մօր, եղբարց, քո տան ու տեղի,
Քո աղգականաց, քո սուրբ աշխարհի
Հաւատոյ համնիս աշխարհին աւեր,
Մի առ մի կարդա 'ի յայդ մատենի :

Այլ վայ ինձ, տիկին, բանմ ունիմ ասել,
Հայրդ յիւարայրի ինձ պարտք է զրել .
Գալ զքեզ զտնել ուր և իցես դու,
Զիւր վերջին անդարձ քեզի աւանդել .

Երբ շատ նետէրով 'ի կուրծքն խոցուած,
Արխնն վաղէր զինչ ջուր յաղբերաց .
Ասաց ով ծառուկ, թէ գԱաստուած սիրես,
Թէ չես մոռայել դու զիմ աղ ու հաց :

Մահդ անօգուտ է, փախիր, մի՛ մնար,
Ամէնից պատմէ զինչ աչօք տեսար .
Գաիր զիմ Շուշան, զանթառամ Շուշան,
Զիւրջին բարեիկս ինքդ նմա տար :

Ասահայր ընկած ընդ դէմ աստղերուն,
 Աւրախ մեռանի վասն ազգի սիրուն.
 Սուրբ եկեղեցւոյ և սուրբ կրօնի,
 Նահատակ լինի հետ իւր ընկերնոն:
 Թարաւոր ոսոխ ջոյն զիս մատնեց,
 Խորամանկ Պարսիկն զիս 'ի մարտ կանչեց.
 Այլ վայ իմ զլսին, իմքն զիս թողին,
 Բաժան բաժնութիւն զմեր տուն քանդեց.
 Քո վիշտն գիտեմ քաջ հանդիսացիր,
 Թէ իմ արխնն ես, ինձ նման կացիր.
 Քս սուրբ հաւատով և քո ազգութեամիր,
 Թուղ այս սուրտ աշխարհը և ինձ մօտ թոփիր.
 Թող Հայ օրիորդք, կանայք և տիկնայք,
 զվարդանայ դուստրն առնեն օրինակ.
 Զմահն մեծ փառք քան զուրացութիւն,
 Աւանդեն որդւոց իրեւ սուրբ կտակ.
 Թող քո սուրբ արիւնդ հետ վարար քուոի,
 Իսկ իմն ընդ Տղմուտ հետ Երասխ զետի,
 Ոլոր տան 'ի Հայք անշեղու քարոզք.
 Մանրիկ գետոց տան զայս պատգամ բանի:
 Գետեր, դուք գետ էք, դուք անուն ունիք,
 Քանի ձեր հողում ձեր երկրում շըջիք.
 Բայց յորդախաղաց երբ թափիք 'ի ծով
 Դուք և ձեր անուն խպառ կորնչիք:
 (Այս բանը լսելով Շուշանիկը կամաց կամաց թուանումն և կցկոտը ձայ-
 նով ասումէ):

ՇՈՒՇԱՆԻԿ
 Վարդան . . . իմ Վարդան . . . իմ հայր սիրական :
 (Այս միջոցին ներս է մտնում զահճապետ երկու դահճճներով և ասումէ):

ԴԱՀՃԱՊԵՏ

Տիրուհի, Վրաց հզօր արքայ Վազգէնը ինձ հրամայեց
 յայսնել ձեղ իւր վՃիւր, որովհետեւ իմ կիսն այսքան տարի
 չ'հնազանդելով իմ կամացս, երկրպագութիւն չ'տուեց կրա-
 րակին և արեգական, և իւր չար օրինակով ուրիշ շատերին
 յամառութեան օրինակ դառաւ, վասն որոյ տարուի կրա-
 կատան հանդէպ, և եթէ այս վերջինն անգտամ ևս յամառեալ
 մնայ՝ զլիսատուի + ուրեմն վեր կացէք, գնանիք նշանակած
 տեղը, կամ կատարեցէք հզօր արքայի հրամանը, կամ ձեր
 գլուխը մատուցէք մեր սրին. (գառնալով դէպ ի դահճճները) վեր-
 ցըք զորան,

ՇՈՒՇԱՆԻԿ

Դահճապետ, մի՞թէ դու այնքան անգութ կ'լինիս մի
 տարաբախա աղջկայ վրայ, որ չես թոյլ տալի մի քանի խօսք
 ևս ասելու, դու ևս կինունիս, դու ևս որդւոց աէր ես, ու-
 րեմն կարեկից եղիր ինձ : Այս ծեր մարդը բանտապետի
 ծառան է, սա վեց տարի է ցամաք հայի կտոր և ջուր եր
 բերում ինձ համար, մի քանի բուզէ դրանը կացէք, ես սո-
 րան մի քանի խօսք ունիմ ասելու, վերջացնեմ խօսքս և այն
 ժամանակը կատարեցէք ձեր պաշտօնը :

ԴԱՀՃԱՊԵՏ

Կատ բարի, մենք դուրսը կ'մնանք. ձեղ հինդ բալէ ժա-
 մանակ. (դահճապետը և դահճճները գորս են գնում, բանտապետը լնկ-
 նելով Շուշանիկի ստքի առաջ ասումէ):

ԲԱՆՏԱՊԵՏ

Ո՛հ, երկնային հըեշտակ, ձեր մահուան սոսկալի վշիւ
ոը լսելիս անդամ, այլոց համար էք հոդս քաշում. եթէ
դուք չեկ ասել այս ծեր մարդոյ համար՝ թէ իմ ծառաս
է, ես արդէն կորած էի և ես իմ մահուանս վրայ չեմ մը-
տածում, ով պիտի այսքան վշտացեալներին խնամք տանէր:

ՅՈՒՇՈՒԿԻԿ

ՈՎ բարի բանտապետ, ես արդէն իմ բոլոր բաղձանա-
ցըս հասայ, ես առանց դաշիճների սուրը ներկելու կր-
մունիմ դոհութեամբ, ես կերթամ իմ հայր Վարդանի մօտ
և կ'փարիմ նրա վզովը. շնորհակալ եմ քեզանից և քո ըն-
տանիքից, Աստուած կ'վարձատրէ ձեզ վշտացեալների վրայ
արած ձեր խնամակալութեան համար. առզի՞ մինչև այն
օրը, երբ Վարաստանը աղատուի այս թշուառութիւնից :

(Դառնումէ գէպի Ծառավլը, որ չոքած լալիս է):

Հէրիք է՛ ողբաս, գօրայիր, վեր կաց,
գնա՛ մէջ Հայոց իմ պատգամասաց.
Խնչ որ ցարդ տեսար և պիտի տեսնես,
Մի առ մի պատմէ յականջս Հայկազանց:

Ազգակցացս, իմ մօր բարեիկս տար,
Ասա՛ ես գնամ առ իմ քաղցրիկ հայր.
Այն տեղ երկնքումը ՚ի յասս Յիսուսի,
Խնդրեմ անասասն պահել Հայ զաշխարհ.

Ծառանեկ, պատղամ տար Հայ աղջեկներին,
Պէայ մարդ սիրեն, սուտ է սէր օտրին.
Արիւն արեան հետ երբ ոչ միանայ,
Զիք այլ որ կապէ ընդ մարդոյն զկին :

(Այս տեղ փոքր ինչ լսում է, և յետոյ կցիսուր և թոյ ձայնով ասում է):

Տէր ։ ։ ։ Յիսուս ։ ։ ։ ընկալ ։ ։ ։ զհոդի իմ ։ ։ ։ (այս ասելով
թեք է ընկնում բարձր վրայ, ներ է մոնաւմ զահճապեսը և ասում է):

ԴԱՀԱՊԵՏ

Մահապարտ, քնիլու ժամանակչէ, ես քեզի մի քանի
խօսք ասելու ժամանակ տուի և ոչ քնիլու, և այս սարսա-
փելի ժամուն ի՞նչպէս է քունդ տանում:

ԲԱՆՏԱՊԵՏ (Լալով)

Ո՛չ դա արդէն մեռած է :

(Դահճապետը տնտղամէ և տեհանումէ, որ յիրավի մեռած է, զարութելով
ետէ քաշլում, և բանալից գորս զնալով ասում է):

ԴԱՀԱՊԵՏ

Ո՛հ, այս ի՞նչ հըաշքէ, ես կերթամ և այս իմ աչօքս
տեսած սքանչելիքը կ'պատմեմ Վազգէն արքային, և բոլոր
աշխարհքին, թէ և սորանով իմ կեանքս վտանգի մէջընկնի:

ԾՈՒՐԻԻԿ

Մաղ չկայ զլիսիս վերեմ, ով շուշան,
Զորացած զլիսից ի՞նչ յոյս, ի՞նչ գուման.
Խնչե՞ ինձ տուիր սաստիկ հրաման,
Քո բանքդ տանել ՚ի սուրբ Հայաստան :


Թոնդ լինիմ ես աստ մարմնոյդ պահապան,
Թոնդ փորեմ զքարն ՚ի քո զերեզման.
Թոնդ լամ սե օրերս, զիմ կորուստ անդարձ,
Թոնդ իմ արտասաօք ցօղեմ զքո տապան :

Զիմ տիրոջ մարմին յԱրտազու դաշտի,
Հետ Պարսից դիոց թողի վշտաղին.
ԿՇՈՒՇԱՆ այստեղ մէջ ապերախտից,
Թողում բան տանել Հայոց աշխարհին :

Ա՞նչ չար աստղի տակ արդեօք ես ծնայ,
 Հալարչ բիւրք մեռին, ինձի մահ չկայ.
 Գիւանդ օխնուի ով անմահ Աստուած,
 Հերիք է՛, հերիք, զր ինչ ցարդ տեսայ:
Զէ, Շուշանիկին զվերջին կտակ,
 Կ'առնում ՚ի բերան զինչ շատիս կաչղակ,
 Կերթամ կուզ ՚ի կուզ գաւաղան ՚ի ձեռս,
 Կ'գառնամ գուսան կերգեմ համարձակ:

Ծեր Ծառուկին եմ ես չար բարի տեսած,
 Անցած բաներից շատ դասեր առած.
 Մարդիկ, Վարդանէն առէք օրինակ,
 Սիրել զազդ, կրօն և միայն զԱստուած:
Կանայք, օրինորդք, ահա՛ Շուշանիկ,
 Իւր վարուքն տայ ձեզ լսու խրատիկ.
 Զոր ինչ ասել է Ճիշտ կատարեցէք,
 Եւ Ծեր Ծառուկին ողորմի ասէք:

(Վարագոյը իջնումէ):



ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Այս ողբերգութեան յօրինօղը պատիւ է համարում
 յայտնել պատուելի հասարակութեանը՝ ՆԱԽ անցեալ տաւ
 րի այս ողբերգութիւնը ներկայացնելիս, խորհրդով յօրիւ
 նողին և իւր սրտեռանդ գործակիցներին լաւ համարուե-
 ցաւ փոխանակ նուագարանի (մցարք) առաջին և երկ-
 րորդ գործողութեանց միջոցումը երդել «գիւղական աղջիկ
 եմես» երգը, որը շատ յաջողակութեամբ երդեց Պ.Ղոր-
 դանեանց քաղցրաձայն աշակերտը, զգեստաւորուած Հընդ-
 կաստանցի օրիորդի շորերով, և ունելով ձեռքը և շլակը
 բարակաման զամբիւղներ. իսկ երկրորդ և երրորդ գործու-
 ղութեանց միջոցումը Հայոց զօրքը իւրեանց զօրավարների
 հետ երգեցին հետեւեալ երգը առ ձեռն յօրինած ողբեր-
 գութեան հեղինակից:

ԽԲԱԽՑՍ ՎԱՐԴԱՆԱՅ Ա.Ո. ԶՕՐԱԿԱՆՍ Ի ՄԵՇ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

ՎԱՐԴԱՆ

ՈՎ Հայկաղունք, ով դիւցազունք.
 Ահա ձեզ նոր հանդիսարան.
 Բացէք աչքերդ, հերիք ննջէք,
 Տարիք դարեր են անցական:

ԶՈՐԱԿԱՆՔ

ՄԵՆՔ պատրաստ ենք, մենք ուխտելենք,
 Մեր կեանքը զոհ բոլորանուեր.
 Մատաղ անել Հայոց աղգին,
 Նորս լեզուին և կրօնին:

ՎԱՐԴԱՆ
Առէք սուրեր, նետ ու անեղ,
Ելք ընդդէմ ձեր թշնամեաց.
Ձեր հաւատը և ձեր ազգը,
Պաշտպանեցէք յօտար ազգաց :

ԶՈՐԱԿԱՆՔ

Հայ զինւորի կեանքը դառնէ,
Երբ որ պարապ տանն է նստած.
Մեղ ասպարէղ անմահ փառաց,
Կռուի դաշնն է նշանակած :

ՎԱՐԴԱՆ

Հայ զօրականք, ձեր նետերը,
Կասպարձից մէջ հէրիք մնան.
Ձեր երկիրը Պարսիկ ոտից,
Բնդէր լինին այդպէս կոխան :

ԶՈՐԱԿԱՆՔ

Մենք պատրաստ ենք, մենք ուխտել ենք,
Սեր սուրբ երկրից հալածական.
Առնել անկրօն Պարսից ազգը,
Փրկչի խաչն է մեղ օգնական :

ՎԱՐԴԱՆ


Հայոց հովիւր, ձեր ոչխարները,
Է՞ր սար ու ձոր թափառական.
Գաղանաց ճանկն լնկած ողբան,
Է՞ր շուէք նոցա կական :

ԶՈՐԱԿԱՆՔ

Մենք պատրաստ ենք, մենք ուխտել ենք,
Սւետարան խաչ՝ ի ձեռին .
Առաջնորդել Հայոց զօրքին,
՚ի ժամ սրբոյ պատերազմին

ԵՐԿՐՈՐԴ՝ Թէպէտ այս ողբերդութեան յօրինողը կամ մնումէր ներկայ ողբերդութեան սեսալ անների պատկերաները ևս ապազրել տալ բայց այստեղ չդտաւ արժանաւոր փորազրիչ. իսկ Փարիզից բերել տալը կարօտումէր ժամանակի ուստի այս ցանկութեան կատարումը թողեց եթէ Աստաւած կյաջաղէ երկրորդ ապազրութեան :

Եւ ԵՐԿՐՈՐԴ՝ Հեղինս կը թիւելի մէջ այս ողբերդութեան ներկայ աշնելու լրաւոնքը իրան է պահամ, ոչ առանց բարի նըստատակի :



ALLEGRETTO

Canto

Կանանց

Piano Forte

pp.

A handwritten musical score for voice and piano. The vocal part (Canto) is in soprano clef, B-flat major, and 2/4 time. The piano part (Piano Forte) is in bass clef, A major, and 2/4 time. The vocal line consists of short, rhythmic notes, primarily eighth and sixteenth notes. The piano part features sustained bass notes and occasional chords. The score is written on ten staves of five-line music paper. There are several ink stains and smudges on the paper, particularly a large one in the center.

A handwritten musical score for voice and piano, continuing from the previous page. The vocal part (Canto) is in soprano clef, B-flat major, and 2/4 time. The piano part (Piano Forte) is in bass clef, A major, and 2/4 time. The vocal line continues with eighth and sixteenth notes. The piano part maintains its harmonic foundation with sustained bass notes and chords. The score is written on ten staves of five-line music paper. There are several ink stains and smudges on the paper, particularly a large one in the center.

Եղամշատիւն գ. Արտեմիս:



ԽՐԱՆՈՑՍ ՎԱՐԴԱՆԱՑ

Երաժշտութիւն գ. Աբովեանց:

Andante

Piano Forte

Andante

PP: 0^q *ξωι* *ηω*

բանակը պատրիարքություն

000
00

A blank musical staff consisting of five horizontal lines and four spaces, ending with a double bar line.

okta

11

am am ab

—

000

—

0 0 0

A page from a musical score featuring Armenian lyrics and musical notation. The lyrics are written in black ink at the top of the page, followed by two staves of musical notation. The first staff uses a soprano C-clef, and the second staff uses an alto F-clef. Both staves have a common time signature. The music consists of eighth and sixteenth note patterns. Below the staves, there are several sets of vertical strokes representing fingerings or performance instructions. The page is numbered '1' in the bottom right corner.

30 MAY 2013

